

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### «Վերադարձեք Ձեր Երկիրը»

Ամերիկայի մեջ անհատի մը դեմ ուղղուած ամենէն վիրաւորական խօսքերէն մէկն է՝ «վերադարձիր քու երկիրդ»: Երբ հասարակ քաղաքացի մը կ'օգտագործէ նման արտայայտութիւն փոքրամասնութեան մը պատկանող մէկ այլ անձի դէմ, ան կը նկատուի ռասիստ ու ցեղապաշտ: Իսկ երբ նման բան արտասանողը երկրի նախագահն է եւ խօսքը ուղղուած է Գոնկրէսի անդամներուն, այդ պարագային հարցը կը վերածուի մեծ գայթակղութեան ու կը յառաջացնէ քաղաքական փոթորիկ:

Միացեալ Նահանգներու նախագահ Տամուլտ Թրամփի անցեալ Կիրակի առաւօտեան, առանց որեւէ դրոյապատճառի «թուրքերէն» շարք մը գրառումներով Ներկայացուցիչներու Տան չորս կին անդամներ մեղադրելով «հակա-ամերիկեան» կեցուածք ունենալու մէջ, կոչ ըրաւ անոնց «վերադառնալու իրենց երկիրները»: Չարմանալիին սակայն այն է, որ այդ չորս Գոնկրէսականներէն երեքը՝ Փորթո Ռիքոնցի ծագումով Ալեքսանտրիա Օքսաիօ Քորթեզ, սեւամորթ Այանա Փրեսլի եւ պաղեստինցի ծագումով Ռաշիտա Թայիպ Ամերիկա ծնած ու մեծցած են, իսկ չորրորդը Իլիամ Օմար փոքր տարիքէն Սոմալիէն գաղթական եկած է Ամերիկա եւ առաջին եւ միակ Իսլամ կին գոնկրէսականը կը նկատուի: Այս չորս քաղաքական գործիչները անցեալ Նոյեմբերին առաջին անգամ ընտրուեցան Ներկայացուցիչներու Տան անդամներ, հանդիսանալով մարմինէն ներս յառաջդիմական գաղափարներու պաշտպաններ ու դարձան Թրամփի բուռն քննադատներ:

Մօտ անցեալին երկրի նախագահը հրապարակաւ «ստախօս» եւ կան «ռասիստ» կոչելը կը նկատուէր անընդունելի երեւոյթ: Մամուլն ու քաղաքական գործիչները կը մերժէին նախագահի հասցէին նման որակումներ կատարել: Սակայն Թրամփի օրօք ամէն ինչ գլխիվար դարձած է, անոր յաճախակի սուտերուն եւ շատերու հասցէին վիրաւորական արտայայտութիւններուն պատճառաւ:

Ներկայացուցիչներու Տան Դեմոկրատ մեծամասնութիւնը չուշացաւ պաշտօնական բանաձեւով մը դատապարտելու Թրամփի «Թուրքերի» գրառումները, զանոնք կոչելով ռասիստական: Նման բանաձեւի մը որդեգրումը ինքնին եզակի երեւոյթ է Գոնկրէսի պատմութեան մէջ: Թրամփի խօսքերը դատապարտող խմբագրականներ հրապարակեցին նաեւ Ամերիկայի գլխաւոր թերթերը:

Քաղաքական մեկնաբանները գրեթէ համակարծիք են, որ Թրամփի գիտակցաբար կը դիմէ նման գրգռիչ միջոցներու, իր փոքրամասնութիւն

## ԱՄՆ Ծնչուն Պէտք Չէ Գործադրէ Հայաստանի վրայ՝ Իրանական Պատժամիջոցներուն Հետեւանքով, Ուաշինգթոնի Սեչ Յայտարարեց Արարատ Միրզոյեան

Աշխատանքային այցով Միացեալ Նահանգներ գտնուող Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արարատ Միրզոյեանը Յուլիս 16-ին, հեղինակաւոր Աթլանթիկ Խորհուրդի (Atlantic Council) կեդրոնին մէջ հանդէս եկած է ելոյթով՝ նուիրուած թաւշեայ յեղափոխութեան ետք Հայաստանի մէջ տեղի ունեցած փոփոխութիւններուն եւ զարգացման հեռանկարներուն:

Ելոյթին ետք ներկայ Ամերիկացի պետական եւ փորձագիտական շրջանակներու ներկայացուցիչներու հետ ծառայած է շահագրգիռ քննարկում Հայաստանի արտաքին քաղաքականութեան, Հայաստանի մէջ սպասուող դատական համակարգի բարեփոխումներու, հայ-ամերիկեան երկկողմ օրակարգի զարգացման եւ այլ հարցերու շուրջ, կը հաղորդէ Աժ լրատուութեան եւ հանրութեան հետ կապերու վարչութիւնը:

ՀՀ ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեան ԱՄՆ-ի գործընկերներուն տեղեկացուցած է, որ Հայաստանի տնտեսութիւնը վնասներ կը կրէ Իրանի դէմ պատ-



Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արարատ Միրզոյեան հանդէս կու գայ Atlantic Council կեդրոնէն ներս

ժամիջոցներէն եւ որ Հայաստանը չի կրնար հրաժարիլ Իրանէն կազմելէն:

«Միացեալ Նահանգներու եւ Իրանի միջեւ առկայ լարուածութիւնը բացասաբար կ'անդրադառնայ Հայաստանի տնտեսութեան վրայ: Մենք կը ցանկանք, որ ԱՄՆ

ծնչում չգործադրէ Հայաստանի վրայ՝ Իրանական պատժամիջոցներու օրակարգին մէջ ներգրաւելու համար: Հայաստանը չի կրնար նման զին վճարել», - ըսած է Միրզոյեանը:

Շար.ը էջ 5

## Հենրիկ Մխիթարեանի Հանդիպումը Լուս Անճելոսի Հայ Համայնքին Հետ



Հ.Մ.Ս.-ի պատասխանատուներէն Վահէ Աջապահեան եւ մարզիկներ՝ Շանթ Շէրեան եւ Ալեքս Գօծապապեան Հենրիկ Մխիթարեանի հետ

Կիրակի, 14 Յուլիս-ի 2019-ի կէսօրէ ետք ժամը 2:00ին, Մարինա Տէլ Ռէյի «Ritz Carlton» պանդոկին մէջ հանդիպում մը տեղի ունեցաւ Հայաստանի հաւաքականի աւագ եւ Լոնտոնի «Արսընալ» ֆութպոլի խումբի անդամ Հենրիկ Մխիթարեանի հետ: Այն Լուս Անճելոս կը գնուի իր խումբին հետ մասնակցելու գերմանիոյ խոշոյն «Պայլերն Միլնիթի» հետ հանդիպումին:

Հանդիպումը կազմակերպուած էր Լուս Անճելոսի գլխաւոր հիւպատոս դեսպան Արմէն Պալապուրթեանի կողմէ:

Հրաւիրուած էին Լուս Անճելոսի հայ համայնքի մարզական միութիւններու խաղացողներ եւ պատասխանատուներ, ինչպէս նաեւ Հայ մամուլի ներկայացուցիչներ: Ներկայ էին «Արարատի» նախկին խաղացողներ՝ Արմէն Սարգիսեան, Լեւոն Իշտոյեան եւ Նորիկ Մեսրոպեան:

Հայ Մարմնամարզական Միութեան (Հ.Մ.Մ.) կողմէ ներկայ էր մարզական դիւանի պատասխանատու Վահէ Աջապահեան եւ մարզիկներ Շանթ Շէրեան եւ

## Ստեփանակերտ Կ'ողջունէ Ներկայացուցիչներու Տան Արցախին Առնչուող Երկու Օրինագիծերը

Արցախի արտաքին գործոց նախարարութիւնը ողջունած է Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան կողմէ «Ազգային պաշտպանութեան պիւտճէթային յատկացումներու մասին» օրէնքին մէջ քննարկական ձևով ջուրի ներկայացուցած փոփոխութեան ընդունումը, որ կը վերահաստատէ ինկլը-Ռոյս նախաձեռնութեան կարեւորութիւնը՝ միտուած Արցախի եւ Ատրպէյճանի զինուած ուժերու միջեւ շփման զիժին լարուածութեան թուլացման: Արցախի Արտաքին գործոց նախարարութեան մամուլի քարտուղարը յոյս յայտնած է, որ ընդունուած փոփոխութիւնը նոր խթան կը հանդիսանայ Ռոյս-ինկլը առաջարկութիւններու իրականացման համար:

«Մասնաւորապէս, փաստաթուղթը նախատեսուած է շփման գծից դիպուկահարներէ, ծանր զինթեխնիկայի եւ նոր զինատեսակների հետքաշում, ինչպէս նաեւ հրաձգութիւններէ տեղորոշման համակարգերի ներդրում եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկա-

Շար.ը էջ 4

Շար.ը էջ 5

Շար.ը էջ 5

# ՐԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## «Անյաջող Կատակ»՝ Գեղարտութեան Դառը Հատիկով

ԼԻԶԱ ՃԱՂԱՐԵԱՆ

Իմ քայլական ԱԺ պատգամաւորները մէկն օրերս ասել է, որ ներկայից իշխանութիւնը «առնուազն 40 տարի» ղեկավարելու է երկիրը:

Այս յայտարարութիւնն ինձ «առնուազն» յիշեցրեց աննկուն ՀՀ-ական էդիկ Շարմազանովի յոխորտանքները: Եթէ յիշողութիւնս չի դաւաճանում, Շարմազանովը 50 տարի էր նախատեսել ՀՀ-ի աւագակախմբի համար, իսկ ասա ԱԺ Եւրախնտեգրացիայի մշտական յանձնաժողովի աշխատանքները անհազան ասազին համեստ է՝ 40 տարի է ծրագրել: Այս պահին: 40 տարի չետոյ հնարաւոր է՝ եւս 40 տարի էլ երկարացնի ՔՊ-ի իշխանութեան «անմահութեան» ժամկէտը: Շատ ճկուն «առնուազն» յաւելումն ապրած կենայ: Շարմազանովի ինքնագործ կանխատեսումը բարեբախտաբար կանխատեսում էլ մնաց, չնայած ՀՀ-ականների կառուցած յանցագործ բուրգն այնքան «կուռ ու կատարեալ» էր, որ ինչքան էլ զայրացնէր մեզ աւագակախմբի

ամբարտաւանութիւնը, այնուամենայնիւ շօշափելիօրէն ցաւոտ տագնապ էր թեւածում գաղջ մթնոլորտում, որ այդ կանխատեսումն այնքան էլ անիրական չէ:

Նիկոլ Փաշինեանի կառավարման այս չափազանց փխրուն շրջանում «առնուազն» տարօրինակ է օրէնսդիր մարմնի ներկայացուցչի այս ինքնավստահութիւնը: Կոչը չենք, բոլորս ենք տեսնում իշխանութիւն կորցրած նախկինների կատարողի, հիստերիկ ցնցումներով եւ նախանձելի կազմակերպութեամբ ու նպատակասլացութեամբ յարձակումները: Աւաղ, տեսնում ենք նաեւ ԱԺ «Իմ քայլը» խմբակցութեան անկատարութիւնն ու հեղհեղուկութիւնը, որի հիմնական պատճառն, ըստ իս, այն է, որ այս քաղաքական ուժի ԱԺ պատգամաւորութեան թեկնածուների ցուցակը կազմողները յեղափոխական ակտիւիստին ու քաղաքական գործչին դրել էին նոյն նոսրին, եւ հիմա հանրութիւնը թաւշեայ թախիծով տեսնում է, որ ակտիւստի կարգավիճակից ԱԺ-ում փափուկ վայրէջք կատարած «օրէնսդիր»

Վահեանցի շատերը մինչ օրս զլխի չեն ընկել, թէ որն է իրենց առաքելութիւնը: Եւ առայժմ լաւատեսութեան հիմքեր չկան, թէ երբեք գլխի կ'ընկնեն: Կամ՝ եթէ նոյնիսկ գլխի ընկնեն, ունե՞ն այն անհրաժեշտ ունակութիւններն ու գիտելիքները՝ պոպուլիստ ակտիւստից լրջմիտ օրէնսդիրի փոխակերպուելու համար:

Այս մտատանջութիւններով հանդերձ, խոստովանենք, որ համակրելի երիտասարդ իմ քայլական պատգամաւորի ինքնավստահութիւնն այնքան էլ անիրատեսական չի թւում:

Եթէ:

Եթէ ներկայ իշխանութիւնը շարունակի այնպիսի քաղաքականութիւն վարել, որ Հայաստանի զլխին մշտապէս կախուած մնայ նախկին աւագակախմբի վերադարձի վտանգը:

Հնարաւոր է, որ «առնուազն 40 տարի» իշխանավարելու պայծառ հեռանկարի հիմքում հենց այդ «բոբոն» է դրուել՝ հանրութեանը գերլարուած պահելու համար: Աւելի պարզ եթէ ասենք, կը

ստացուի, որ ՔՊ-ական իշխանութիւնները չար երեխաներին սաստող ծնողների քաղաքացիներն են կիրառում նախկիններին ողջ ուժով ստող ՀՀ քաղաքացիներին նկատմամբ: «Այ, որ մեզանից դժգոհէք, էն ՀՀ-ական ու ռոբական «մեշուկ պապիները» հետ կը գան ու ձեզ հում-հում կ'ուտեն»:

Առայժմ համարենք, որ ԱԺ իմ քայլական պատգամաւորն անյաջող կատակ է արել, եւ իմ վերագրեալ ենթադրութիւնն էլ դրանից բխող անյաջող կատակների շարքից է:

Եւ յուսանք, որ նոր իշխանութեան ինքնավստահութիւնն այլ՝ անհամեմատ ազնիւ ակունքից է սնոււմ: Այսինքն, ՔՊ-ականներն «առնուազն» վստահ են, որ արմատից պոկելու են ու պատմութեան աղբանոցն են նետելու ե՛ւ նախկին աւագակախմբին, ե՛ւ նրանցից զարշահոտող վտանգը: Եւ որ դրա համար ջանք չեն խնայելու՝ պատասխանատուութեան բեռն ամբողջովին առնելով իրենց ուսերին, ոչ թէ շարունակելու են պատեհ-անպատեհ՝ հասարակութեան դժգոհութիւնների «քթի տակ» իրենց վարկանիշի տոկոսներն ու ռոբասերժական հաւաքական «բոբոյի» վերադարձի վտանգը թափահարել:

Եթէ ճշմարտութեան հատիկ կայ իմ այս «անյաջող կատակի» մէջ, ապա իշխանութիւնների որդեգրած նման կեցուածքը ոչ միայն ազնիւ չէ, ոչ միայն մանկամտութիւն է, նաեւ յղի է լրջագոյն կործանարար հետեւանքներով, պարտնայք եւ տիկնայք ինքնագործ իշխանաւորների:

Աւելին՝ պարզունակ կարճատեսութիւն է:

Առնուազն:

«Ի ԼՈՒՐ»

## Երեք Նախագահների Ծգնաժամի Հանգուցալուծումը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱՆԵԱՆ

Ճգնաժամ կայ էն պահից, երբ սահմանադրական փոփոխութիւններն իրականացուել են, որը չի ծառայել հանրային շահին: Այդ կարծիքը «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում արտայայտել է արդարադատութեան նախարար Ռուստամ Բաղասեանը՝ անդրադառնալով սահմանադրական ճգնաժամի վերաբերեալ հարցին, որ անցնող շաբաթներին ամենայնաւախ հնչողներից է ՄԴ շուրջ ստեղծուած իրավիճակի համատեքստում:

Աւելի վաղ առիթ ունեցել եմ անդրադառնալ հարցին, խօսելով այն մասին, որ ՄԴ շուրջ չի կարող ճգնաժամ «ստեղծել» կամ «ստեղծուել» իրաւական, դատական ճգնաժամ, որովհետեւ ճգնաժամի ստեղծումն այդ իմաստով ենթադրում է «չճգնաժամի» առկայութիւն: Մինչդեռ, Հայաստանում եղած այսպէս ասած անազմուկ իրավիճակը շատերը թիւրիմացաբար ընկալում են իբրեւ «չճգնաժամային» իրավիճակ:

Իրականում, եթէ խօսում ենք ճգնաժամի մասին, ապա Հայաստանում սահմանադրական, իրաւական, դատական ճգնաժամ առկայ է առնուազն քառորդ դար, որովհետեւ ստեղծուել են կառուցներ, որոնք եղել են աւելի շուտ ցուցանակ, ոչ թէ ինստիտուտ: Խօսքը դատական, ընտրական, սահմանադրական կառուցների մասին է:

Ի վերջոյ, նաեւ հենց այդ ճգնաժամն է, որ Հայաստանը բերել է յեղափոխութեան անհրաժեշտութեան ու հրամայականի, եղափոխութեան զարգացումը դարձնելով գործնականում անհեռանկար, քանի որ արտաւոր համակարգը միշտ լինելու էր ռեֆորմիստական առանձին փորձերից աւելի ազդեալ, առնուազն տգիտութեան եւ մարտնչող միջակութեան բնութից ելնելով:

Եթէ Հայաստանում չլինէր սահմանադրադատական ճգնաժամ, չէր հասունանալ յեղափոխութեան անհրաժեշտութիւնը: Իսկ այդ անհրաժեշտութիւնը սկսել է հասունանալ կեղծուած առաջին ընտրութիւնից, պարտադրուած Սահմա-

նադրութիւնից: Պարզապէս, առաջին տարիներին հանրութիւնն ունէր էվոլուցիոն ցիկլներով իրավիճակ փոխելու յոյս: Այդ յոյսը աստիճանաբար չէզոքացաւ, տեղը զիջելով այլ պատկերացումների եւ մտեցումների:

Գործնականում, այն, ինչ ասում է արդարադատութեան նախարարը, հենց այդ ճգնաժամային քառորդարեայ ընթացքի արձանագրումն է, որովհետեւ Հայաստանում Սահմանադրութիւնը որպէս իշխանութեան կնիք հանրութեանը առաջին անգամ պարտադրուել է ոչ թէ 2015 թուականին, այլ երեք անգամ՝ 1995, 2005 եւ 2015 թուականներին: Այլ կերպ ասած, Հայաստանում տասը տարին մէկ պարբերականութեամբ թարմացուել է եղած ճգնաժամը:

Հետեւաբար, յաղթահարման արդիւնաւէտ ուղիների մասին խորհելու համար անհրաժեշտ է ճգնաժամը ախտորոշել ամբողջութեամբ: Ակնառու է, որ այս կամ այն անձի Սահմանադրութիւնը չէ ճգնաժամ

Շար.ը էջ 18

## Անթոյլատրելի Դանդաղկոտութիւն Սեւանայ Լճի Գունափոխման Հարցում

Օպերատիւ աշխատանքը, յատկապէս՝ այն ոլորտներում, որտեղ գործ ունենք մարդու առողջութեան, անվտանգութեան հետ, ուղղակի հրամայական է: Այս առումով զարմանալի դանդաղկոտութիւն ցուցաբերեց ՀՀ առողջապահութեան նախարարութիւնը Սեւանայ լճի գունափոխման հարցում:

Գարնանից մասնագիտական շրջանակները, ԱԺ պատգամաւորները խօսում են Սեւանայ լճի հնարաւոր ծաղկման եւ դրանից բխող վտանգների մասին, սակայն մասնագիտական շրջանակները, տունեւ ղեկավարում՝ ՀՀ առողջապահութեան նախարարութիւնն ու Մննդի տեսչութիւնը, քար լռութիւն էին պահպանում, կարծես

իրենք չպէտք է զբաղուէին մարդկանց առողջութեան վտանգների չէզոքացման հարցերով:

Երբ կովերը սատկեցին Սեւանայ լճի ափին, նոր աղմուկ բարձրացաւ, եւ միայն երէկ՝ գրեթէ ամրան կէսին, ՀՀ առողջապահութեան նախարարութիւնը թմբիրից դուրս եկաւ ու մասնագիտական յայտարարութիւն տարածեց. «Նախարարութիւնը յորդորում է քաղաքացիներին Սեւանայ լճի ափամերձ որոշ տարածքներում, որտեղ կապտականաչ ջրիմուռներ են նկատուում, խոսափել լողալ այդ հատուածներում»:

Սրանց որոշ տեսակներ արտադրում են կենդանիների եւ մարդկանց առողջութեան վրայ բացասաբար անդրադարձող թոյ-

ներ (տոքսիններ), որոնց ազդեցութեանը մարդիկ կարող են ենթարկուել «ծաղկած» ջուրը խմելու, դրանում լողալու կամ անզգուշաբար կուլ տալու հետեւանքով: Նման ջրում լողալու դէպքում կարող են ի յայտ գալ հետեւեալ ախտանշանները՝ ասթմա, աչքերի զրգուռածութիւն, ցան, մասնաւորապէս՝ բերանի եւ քթի շուրջ, մաշկի զրգուռածութիւն, ալերգիկ ռեակցիա:

Անզգուշութեամբ ջուր կուլ տալու դէպքում կարող է ի յայտ գալ ստամոքսի ցաւ, սրտխառնոց, փսխում, փորլուծութիւն, ջերմութիւն, կոկորդի ցաւ, զլխացաւ, մկանային եւ յօդերի ցաւ, բլիթներ

Շար.ը էջ 19

**Մամիա**  
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՅՒԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱՎԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՂԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

# ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Հայաստան Այցելած Ձբօսաշրջիկները Այս Տարի Ծախսած են 120 Միլիոն Տոլար Աւելի Քան Նախորդ Տարի

Ընթացիկ տարուան առաջին վեց ամիսներուն, Հայաստան այցելած զբօսաշրջիկները ծախսած են 120 միլիոն տոլար աւելի քան նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին:

Կառավարութեան նիստին ընթացքին այս մասին յայտնած է վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ աւելցնելով, որ զբօսաշրջութեան ոլորտին մէջ դրական ընթացք կայ:

Ըստ Փաշինեանի՝ այս մէկը յայտնի դարձած է ուսումնասիրելով արտասահմանի մէջ տրուած դրամատնային քարտերով կատարուած վճարումները պանդոկներուն, ճաշարաններուն եւ այլ վայրերուն մէջ:

Նիկոլ Փաշինեան դիմած է Ազգային Անվտանգութեան Ծառայութեան տնօրէն Արթուր Վանեցեանին եւ ոստիկանապետ Վալերի Օսիպեանին՝ նշելով. «Խրաւակարգը շատ կարեւոր է զբօսաշրջիկներու զգացողութեան համար: Հայաստանի մէջ քաղաքացիներն ու զբօսաշրջիկները պէտք է իրենց անվտանգ զգան, եւ ատիկա շատ

կարեւոր է զբօսաշրջութեան հետագայ զարգացման համար»:

Կեդրոնական դրամատան նախագահ Արթուր Ճաւատեան նշած է, որ այս տարուան Յունիսին, նախորդ տարուան Յունիսին հետ բաղդատած, արտասահմանեան քարտերով գործարքներուն աճը ճաշի սպասարկութեան կէտերուն մէջ կազմած է 75 տոկոս, պանդոկներուն՝ 32 տոկոս աճ, կանխիկացման գործարքները՝ 22 տոկոս աճ, գործակալութիւններուն մէջ՝ 36 տոկոս աճ, իսկ հանրախանութիւններուն՝ 38-74 տոկոս աճ:

«Այս տարուան վեց ամսուան ընթացքին, զբօսաշրջիկներուն թիւը աճած է 85 հազարով, կամ՝ 12,3 տոկոսով: Մենք 2013-ին հետազոտութիւն ըրած ենք եւ պարզած, որ ամէն զբօսաշրջիկ Հայաստանի մէջ ծախսած է 730 տոլար: Այսօրուան վերլուծութիւնները ցոյց կու տան, որ այդ թիւը 880 տոլար է: Հիւրանոցներուն թիւը՝ 2013-ի համեմատ՝ գրեթէ կրկնապատկուած է, աճած է 300-ով», դիտել տուած է Կեդրոնական դրամատան նախագահը:

## Սեզի Համար Գերխնդիր Է Դատական Համակարգի Առողջացումը. Լենա Նազարեան

Հայաստանի իշխանութիւնը չի հրաժարիր դատական համակարգի առողջացման գործընթացին, լրագրողներուն ըսած է Ազգային Ժողովի փոխնախագահ Լենա Նազարեանը՝ անդրադառնալով վեներտիկի Յանձնաժողովի փաստաթուղթին մէջ տեղ գտած ձեւակերպումներուն, որոնք հրապարակած էր արդարադատութեան նախկին նախարար Արփիլէ Յովհաննիսեանը:

«Վեթիկը» մի գործիք է, որը ստուգում է պաշտօնեայի համապատասխանութիւնը տուեալ պաշտօնին՝ որոշակի չափանիշներով: Հիմա մշակուած են այդ չափանիշները, եւ օրէնսդրական փոփոխութիւններ են տեղի ունենալու: Հիմա արդէն Արդարադատութեան նախարարութիւնում մշակուած են այդ փոփոխութիւնները, եւ Սեպտեմբերին ԱԺ-ում դա կը քննարկենք ու կ'ընդունենք: Եւ դրանց հիման վրայ էլ տեղի կ'ունենայ այդ ստուգման գործընթացը: Հիմա դրա անունը կը դնենք «Վեթիկ», թէ բարեվարքութիւն, կամ այլ բան, դա նշանակութիւն չունի: Մեր յանձնառութիւնը՝ դատական համակարգը բարեփոխելու եւ առողջացնելու, ամբողջութեամբ ուժի մէջ է, եւ մենք դա իրականացնելու ենք», ըսած է Լենա Նազարեանը:

Նշենք, որ ըստ հրապարակ-



Ազգային ժողովի փոխնախագահ Լենա Նազարեան

ուած փաստաթուղթի՝ «Համաձայնութիւն ձեռք բերուած է, որ բոլոր պաշտօնավարող դատաւորներու ընդհանուր վեթիկը ոչ անհրաժեշտ, ոչ ալ օգտակար կ'ըլլայ»:

Հարցին, թէ արդեօք սա կը նշանակէ, որ ՀՀ իշխանութիւնները կը հրաժարին վեթիկին, Լենա Նազարեանը պատասխանած է. «Ես ընդհանրապէս չեմ ուզում մեկնաբանել այդ փաստաթուղթը, չգիտեմ դա ինչ փաստաթուղթ է, սեւագիր է, թէ ոչ: Ես ընդամէնն ուզում եմ վերահաստատել մեր յանձնառութիւնը դատական համակարգը բարեփոխելու, առողջացնելու ուղղութեամբ»:

## «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» Բժշկական Կեդրոնի Նախկին Տնօրէն Արա Մինասեանի Նկատմամբ Յայտարարուած Է Հետախուզում

ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի խնամի, վատիկանի մէջ Հայաստանի նախկին դեսպան Միքայէլ Մինասեանի հօր՝ «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» բժշկական կեդրոնի նախկին տնօրէն Արա Մինասեանի մեղադրանքը վերաորակուած է, խափանման միջոց ընտրուած է կալանաւորումը:

Այս մասին յայտարարած է Քննչական կոմիտէն եւ ընդգծած՝ նկատի ունենալով, որ Մինասեանը կը թաքնուի քննութեանն եւ պարզ չէ անոր գտնուելու վայրը՝ Արա Մինասեանի նկատմամբ յայտարարուած է հետախուզում:

Արա Մինասեանը կը մեղադրուի փաստաթուղթեր կեղծելու եւ առանձնապէս խոշոր չափերու խարդախութիւն կատարելու մէջ: Եւս քանի մը դրուագ աւելցած է:

Քննչական կոմիտէի բաժանմունքի տեղեկատուութեան եւ հասարակացութեան հետ կապերու բաժնի պետ Նայիրա Յարութիւնեանը մանրամասնած է. «Արա Մինասեան իր կարգադրիչ լիազօրութիւնների բժշկական կեդրոնի շահերին հակառակ օգտագործելով՝ Հայաստանի Հանրապետութեան պատճառուել է առանձնա-



«Գրիգոր Լուսաւորիչ» բժշկական կեդրոնի նախկին տնօրէն Արա Մինասեան

պէս խոշոր չափերով՝ 908 միլիոն դրամից աւել գոյքային վնաս: Առանձնապէս խոշոր չափի՝ 45 միլիոն 402 հազար 392 դրամ, 27 միլիոն դրամից աւելի ՀՀ դրամ վատնում կատարելու եւս կայ երկու դրուագ: Եւ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնութեամբ փաստաթղթերի կեղծիք կատարելու համար»:

## 3 Միլիառ Դրամ Կիւմրիի Խնդիրներու Լուծման Համար

Աղէտի Գօտիի Բնակարանային Խնդիրներու Լուծման Նպատակով Կառավարութիւնը 3 Միլիառ Դրամ Պիտի Յատկացնէ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ, տեղի ունեցած է խորհրդակցութիւն, որուն ընթացքին քննարկուած են 1988 թուականի երկրաշարժի հետեւանքներու վերացման ուղղութեամբ կառավարութեան ընելիքները:

Նիկոլ Փաշինեան յիշեցուցած է, որ նախորդ տարուան Դեկտեմբեր 7-ին Գիւմրիի մէջ տեղի ունեցած կառավարութեան արտագնայ նիստին ընթացքին որոշուած էր ստեղծել աշխատանքային խումբ, որուն հիմնական գործառույթը պէտք է ըլլար յստակեցնել երկրաշարժի գոտիին վրայ առկայ խնդիրներն ու ծաւալները:

«Գիտենք, որ ցաւօք այսօր դեռեւս բազմաթիւ մարդիկ ապրում են տնակներում եւ մենք

խնդիր ենք դրել յստակ արձանագրել, թէ ինչպէ՞ս ենք պատկերացնում այդ խնդրի լուծումը եւ ճշդել հարցի գինը, այսինքն, թէ ի՞նչ ծաւալի ֆինանսաւորում է անհրաժեշտ դրա համար: Կայ նաեւ երկրորդ խնդիրը՝ վերացնել ոչ միայն աղէտի գոտին գուտ տնակ կամ բնակարան տրամաբանութեան մէջ, այլ հարցը դիտարկել քաղաքաշինական զարգացման հետեւանքի եւ տրամաբանութեան մէջ:

«Իսկ ընդհանուր առմամբ ուզում եմ ասել, որ մեզանում կարծես թէ այդքան էլ ընկալուած չէ, բայց քաղաքաշինութիւնն ունի շատ խորը բովանդակային նշանակութիւն, որովհետեւ իմ համոզմամբ, քաղաքաշինութիւնն այն կարեւոր կառուցակարգերից է, որ ի վերջոյ ստեղծում է հանրային մտածողութեան ձեւերը, մոտելները», նշած է Նիկոլ Փաշինեանը:

## Խորհրդարանական Ուժերը Համաձայն Չեն Սոր Հարցախոյզի Արդիւնքներուն Հետ

Հայաստանի խորհրդարանէն ներս ներկայացուած կուսակցութիւնները համաձայն չեն քաղաքական ուժերու վարկանիշի վերաբերեալ Միջազգային Հանրապետական Ինստիտուտի (ՄՀԻ) հրապարակած հարցման արդիւնքներուն հետ:

Ըստ այդ հարցումներու, եթէ տեղի ունենայ խորհրդարանական ընտրութիւններ, ապա իշխանական «Իմ քայլի» օգտին պատրաստ է քուէարկելու հարցուածներու 59 տոկոսը, «Բարգաւաճ Հայաստանի» օգտին՝ 12 տոկոսը: 5 տոկոսով 3-րդ տեղը գրաւած է նախկին իշխող ուժը՝ Հանրապետականը: Խորհրդարանական 3-րդ ուժը՝ «Լուսաւոր Հայաստանը» դուրս մնացած է եռեակէն:

Իշխող «Իմ քայլը» խմբակցութեան քարտուղար Յակոբ Սիմիտեանը վստահ է, որ իրենց վարկանիշը 69 տոկոսէն ալ բարձր է:

Յիշեցնենք, «Իմ քայլը» 2018-ի Դեկտեմբերին տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններուն ստացած էր ընտրողներու 70 տոկոսի քուէն:

Խորհրդարանական ամենամեծ ընդդիմադիր խմբակցութիւնը նոյնպէս համաձայն չեն հրապարակուած հարցումներուն հետ: Աւելին, խմբակցութեան պատգամաւոր Նայիրա Զոհրապեանը կասկածի տակ կը դնէ հարցումներու արժանահավասարութիւնը՝ պնդելով, որ ԲՀԿ-ի վարկանիշը ոչ թէ 12 տոկոս է, այլ շատ աւելի բարձր է:

## Յառաջիկայ Տարեկիզբին Կենսաթոշակները Պիտի Բարձրանան 10 Տոկոսով

2020 թ-ի Յունուար 1-էն Հայաստանի մէջ 10 տոկոսով պիտի բարձրանան կենսաթոշակները: Այս մասին կառավարութեան նիստի ժամանակ յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Նիկոլ Փաշինեանը նաեւ յայտնած է, որ այս տարուան Սեպտեմբեր 1-էն պիտի բարձրանան ուսուցիչներու աշխատավարձերը:

«Կառավարութիւնը կը փորձի միանգամից մէկ ծրագրի շրջանակում լուծել 1988 թուականի երկարաշարժի հետեւանքով բնակարան կորցրած այն քաղաքացի-

ների բնակարանային խնդիրները, որոնց նկատմամբ պետութեան ունեցած պարտաւորութիւնները դեյուրե այս պահին արձանագրուած են», ըսած է Նիկոլ Փաշինեանը՝ աւելցնելով, որ անոր համար պիտի տրամադրուի 3 միլիառ դրամ:

Ինչ կը վերաբերի ծրագրերու մանրամասներուն, ապա, ըստ անոր, անոնք նաեւ յետագայ քննարկումներու ընթացքին պիտի յստակեցուին: Վարչապետը նաեւ յիշեցուցած է, որ Յունիս 1-էն արդէն գինուորականներու աշխատավարձերը բարձրացած է:

# ԼՈՒՐԵՐ

## 2018-ին Մարդիկ Հասկցան, որ Իրենք Են Հայաստանի Որոշիչ Ուժը. Վարչապետ Փաշինեան



Վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ Լոռիի մարզի «Սմարթ» կեդրոնէն ներս

Հայաստանի մէջ տեղի ունեցած յեղափոխութեան տնտեսական հիմքը այն մարդիկ են, որոնք դուրս եկած են «աւանդական օլիգարխիկ-փոստած տրամաբանութեան շրջանակներէն եւ ցուցաբերած են նախաձեռնութիւններ», Լոռիի մարզի «Սմարթ» կեդրոնէն ներս ըսած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Մէկ տարի առաջ «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի կողմէ կառուցուած կեդրոնը փաշինեան համարեց այդ կարեւոր նախաձեռնութիւններէն մէկը, որ 6 միլիոն տոլար բարեգործական ներդրումները ծախսած է ոչ թէ Հայաստանի բնակիչներուն «ուտելիք, հագուստ, կօշիկ» տալու, այլ մարդոց ինքնավստահութիւնը մեծցնելու համար:

«2018 թուականին մարդիկ հաւատացին իրենք իրենց, ոչ թէ մարդկանց, որ կանգնած են հարթակում, այլ իրենք իրենց, որովհետեւ իրենք հասկացան, որ իրենք են որոշիչ ուժը Հայաստանի Հանրապետութիւնում: Յեղափոխութիւնը մեր երեխաներին ասում է մի բան՝ դուք կարող էք փոխել աշխարհը: Յեղափոխութիւնը սա է, երբ որ 50 տարեկան մարդը, 40 տարեկան մարդը կարող է երեխայի հետ գալ, նոյն սենեակում նստել եւ ինչ-որ բան սովորել», - նշած է Փաշինեանը:

Կառավարութեան ղեկավարը ըսած է՝ յեղափոխական նշանակութիւն ունեցած ամենակարեւոր նա-

խաձեռնութիւնը սփիւռքի շարք մը գործիչներու վերաբերմունքի փոփոխութիւնն է Հայաստանի մէջ ընելիքի վերաբերեալ: «Եկաւ մի պահ, երբ սփիւռքի ընկալումը փոխուեց եւ նրանք եզրակացրին, որ զուտ բարեգործական տրամաբանութիւնը պէտք է փոխել զարգացման տրամաբանութեամբ», - ըսած է Նիկոլ Փաշինեանը «Սմարթ» կեդրոնին մէջ հաւաքուած լրուցիչներուն եւ հիւրերուն:

«Հին բանաձեւը՝ օգնել մարդկանց, որ նրանք վերապրեն դժուարութիւնը, նոր բանաձեւը այն նոյն բանաձեւն է, որի արդիւնքում տեղի ունեցաւ յեղափոխութիւնը: Նոր բանաձեւը հետեւեալն է՝ օգնել մարդկանց, որ իրենք հաւատան իրենք իրենց: Ես ասում եմ, որ լաւ է, որ կան նաեւ այնպիսի մարդիկ, ովքեր ոչ թէ որոշում են, որ, օրինակ, Նոր տարուանից առաջ 6 միլիոն տոլարի բրինձ, թոմաթ, լիմոնատ գնել եւ բաժանել մարդկանց, որովհետեւ Հայաստանում նման բան սովորաբար անում են ինչ-որ բան ետ ստանալու համար: Բայց Հայաստանում այդպիսի տասնեակ 6 միլիոն տոլարներ են ծախսուել ձեզ յայտնի մարդկանց կողմից, բայց այդ մարդկանցից ոչ մէկը այս կեդրոնի կէսի չափ կեդրոն չի ստեղծել: Իսկ այս կեդրոնները մարդկանց օգնում են, երեխաներին օգնում են, որպէսզի իրենք իրենց հաւատան», - ընդգծած է վարչապետը:

### Վերադարձէք Ձեր Երկիրը

Շարունակուած էջ 1-էն

Կազմող համակիրները զօրաշարժի ենթարկելու նպատակով: Ան շատ լաւ գիտէ, որ վերընտրութեան միակ յոյսը այդ զանգուածի առաւելագոյն մասնակցութիւնն է գալիք ընտրութիւններուն, միաժամանակ հակառակ կողմի քուէարկողներու թիւի

կրճատումը: Յստակ է, որ Տանուլտ Թրամի պատրաստ է դիմելու ամէն միջոցի իր վերընտրութիւնը ապահովելու համար, ու այդ ուղղութեամբ յօժար է ոչ միայն պառակտելու երկիրը, այլ նաեւ քանդելու անոր հիմնական սկզբունքները:

«ՍԱՍԻՍ»

## Արաբական «Մաստար» Ընկերութիւնը Հայաստանի Մէջ Պիտի Կատարէ 500 Միլիոն Տոլարի Ներդրում



Կը ստորագրուի վերականգնող ուժանիւթի ոլորտին մէջ ներդրումներ իրականացնելու վերաբերեալ յուշագիր

«Հայաստանի պետական հետաքրքրութիւններու ֆոնտի» եւ արաբական «Մաստար» ընկերութեան միջեւ կնքուած է վերականգնող ուժանիւթի ոլորտին մէջ ներդրումներ իրականացնելու վերաբերեալ յուշագիր: Կողմերու նախնական գնահատմամբ՝ ներդրումներու ծաւալը պիտի կազմէ 500 միլիոն տոլար:

«Ձեր երկիրը ունի մեծ ծաւալի միջոցներ, մասնաւորապէս, արեգակնային ուժանիւթի մեծ պաշար, որ շատ մրցունակ է: Որոշ տեղերու մէջ դուք ունիք նաեւ հողմային ուժանիւթի աղբիւր, որ նոյնպէս շատ մրցակցային եւ շատ դրական ուժանիւթի աղբիւր է: Միեւնոյն ժամանակ մենք պէտք է չհերքենք այն փաստը, որ ձեր երկիրը ունի նաեւ ջրային ուժանիւթի աղբիւրներու կարողութիւններ: Բայց մենք հիմնական պիտի կեդրոնանանք արեւային ինչպէս նաեւ հողմային ուժանիւթ արտադրելու վրայ», - ըսած է «Մաստարի» գործադիր տնօրէն Մուհամատ Ճամիլ Ալ Ռամահին:

«Հայաստանի պետական հետաքրքրութիւնների ֆոնտի» գործադիր տնօրէն Դաւիթ Փափազեանի խօսքով՝ «Մաստար» ընկերութեան եւ «Հայաստանի պետական հետաքրքրութիւններու ֆոնտի» մի-

ջեւ քննարկումները եղած են համագործակցութեան մաշտաբի շուրջ: - «Մեր միտքը այն է եղել, որ «Մաստարը» լինելով այն մաշտաբի եւ թեխնիքական գիտելիքների, իրականացուած ծրագրերի ձեռնարկութիւն, մեր համար իտէալական գործընկեր է՝ այս ուղղութեամբ աշխատելու համար», - նշած է Փափազեանը:

Փոխվարչապետ Տիգրան Աւինեանը լրագրողներուն հետ զրոյցի ժամանակ ըսած է, որ «Մաստար» ընկերութիւնը կը նախատեսէ Հայաստանի մէջ մօտ 500 Մէկա ուաթ հզօրութեամբ ուժանիւթի կայաններ կառուցել: Աւինեանի խօսքով՝ այդ ներդրումները Հայաստանի ուժանիւթային անվտանգութեան առումով շատ կարեւոր քայլ պիտի ըլլան: «Մենք ունենք ՀՀ-ի արեւային քարտէզը եւ ըստ նպատակայարմարութեան եւ ըստ ծաւալների համապատասխան ծրագրերը կը նախապատասխան ծրագրերը կը նախապատասխան հիմնականում մրցակցային հենքով, որովհետեւ դաշտում այլ խաղացողներ եւս կան: Մենք կը կարողանանք իրականացնել, ենթադրաբար մինչեւ 2036 թուականը [կը ստեղծենք] մօտաւորապէս 4000-4100 Մեկա ուաթ հզօրութեամբ վերականգնող ուժանիւթի կայաններ», - ըսած է փոխվարչապետը:

## ԱԱԾ-ն Քննութիւն Սկսած է՝ Պարզելու Ելեկտրական Համակարգի Խափանման Պատճառները

Կառավարութեան նիստի ժամանակ Ազգային անվտանգութեան ծառայութեան տնօրէն Արթուր Վանեցեանը տեղեկացուցած է, որ ԱԱԾ-ն քննութիւն սկսած է՝ պարզելու Հայաստանի էլեկտրական համակարգի երէկուայ խափանման պատճառները:

Վանեցեանը ըսած է. - «Իմ կողմից յանձնարարութիւն է տրուել, որպէսզի նիւթեր նախապատասխանուեն երէկուայ էլեկտրական տատանումների հետ կապուած եւ անջատումների հետ կապուած, որպէսզի յստակ պարզուի ուժանիւթի համակարգի խափանման պատճառները: Չնայած նախնական տուեալները կան, բայց ես կարծում եմ, որ պէտք է խոր ուսումնասիրութիւն իրականացուի, հետաքննութիւն իրականացուի եւ գնահատական տրուի, թէ միտում եղե՞լ է, չի եղե՞լ, կա՞ն մեղաւորներ, ցուցաբերուե՞լ է անգործութիւն, թէ՞ ոչ:

Արդիւնքների մասին կը զեկուցեմ»:

Իր հերթին վարչապետ Նիկոլ Փաշինեանը յայտարարեց, որ խափանման պատճառներու վարկածները երկուքն են, երկուքն ալ՝ արտաքին, ներքին պատճառ չկայ:

Յուլիս 10-ին Հայաստանի որոշ մարզերու ու Երեւանի մէջ հոսանքազրկումներ եւ հոսանքի տատանումներ տեղի ունեցան: Պաշտօնեաները յայտարարեցին, որ երկրի ուժանիւթի համակարգին մէջ վթար տեղի ունեցած է, որուն հետեւանքով սկիզբը անջատուած է Հրազդանի ԶԷԿ-ի (Չերմաէլեկտրակեդրոն) 5-րդ հատուածը, այնուհետեւ՝ Երեւանի ԶԷԿ-ն (Չերմաէլեկտրակեդրոն) ու աւելի փոքր կայաններ:

Յայտարարուած է նաեւ, որ հակառակ նման մաշտապային վթարին, համակարգի կայունութիւնը 70 տոկոսով ապահովուած է՝ էլեկտրականութիւն ներկրուած է վրաստանէն եւ Իրանէն:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
 ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԴՈՔԻ ՐԱՄԱՐ)  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՐԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**(626) 797-7680**

### Թուրք Զորավարի մը Կարծիքով՝ Հայաստանը Կրնայ Օդային Հարուած Հասցնել Թուրքիոյ

Թրքական «Milliyet» թերթի վերլուծաբան Թունճա Պէնէճինը ուշագրաւ յօդուած հրատարակած է՝ «Ռուսական S-400 ՀՊՊ համակարգերը, որ երկրներէն մեզ պիտի պաշտպանեն» վերտառութեամբ:

Պէնէճինը նախ նշած է, որ քանի մը օրէն Ռուսաստանը Թուրքիոյ պիտի մատակարարէ ՀՊՊ համակարգերը, որոնք պաշտօնական Անգարայի համար ունին ռազմավարական նշանակութիւն:

«Էրմէնի հասցեր»-ի փոխանցմամբ, հեղինակը գրած է, որ այդ համակարգերու առանձնատեսակութիւնը եւ կարեւորութիւնը պայմանաւորուած է անոնց մէջ գոյութիւն ունեցող գերզայուն ռատարներով:

Անդրադառնալով այն հարցին, թէ ռուսական ՀՊՊ համակարգերը Թուրքիան յատկապէս որ երկիրներէն պիտի պաշտպանեն՝ յօդուածի հեղինակը պարզաբան-

ման նպատակով հարցազրոյց քննարկել է Թուրք պաշտօնաթող զօրավար Խամայիլ Հաքքը Փեքինի հետ:

Վերջինս անդրադառնալով այդ հարցին նշած է. «Թուրքիոյ վրայ հնարաւոր օդային յարձակումներ կրնան ըլլալ Յունաստանի, Իսրայէլեան օդուծի կողմէ եւ պալիսթիք հրթիռներու միջոցով: Կայ Իրանը, որ այս պահին մեզի համար թշնամի չէ, սակայն չենք գիտեր, թէ վաղը ինչ կ'ըլլայ, մանաւանդ որ անոնք ունին պալիսթիք հրթիռներ 2000-2500 քմ հեռահարութեամբ: Յարձակումներ կրնան ըլլալ նաեւ Հայաստանի կողմէ: Թուրքիան չունի այդպիսի ՀՊՊ համակարգեր անոնց դիմակայելու համար»:

Անոր խօսքով՝ Թուրքիան ունի Stinger տեսակի ամերիկեան շարժական գէնիթարթիռային համակարգեր, որոնք ի գօրու են թիրախը ոչնչացնել միայն 7-8 քմ հեռահարութեան վրայ:

### Հայաստանի Նախագահին Կողմէ Յատուկ Պարգև՝ Նախկին Ծերակուտական Ռոպերթ Տոսկին

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեանը հրամանագիր ստորագրած է Ռոպերթ Ճոզէֆ Տոսկը Պատուոյ շքանշանով պարգեւատրելու մասին:

«Արմէնբրես»-ին այս մասին յայտնած են ՀՀ նախագահի աշխատակազմի հասարակայնութեան հետ կապերու վարչութեանէն:

«Հիմք ընդունելով վարչապետի միջնորդութիւնը՝ համաձայն Սահմանադրութեան 136-րդ յօդուածի, ինչպէս նաեւ «Հայաստանի Հանրապետութեան պետական պարգեւներու եւ պատուաւոր կոչումներու մասին» օրէնքի 5.3-րդ յօդուածի 1-ին մասի. Հայաստանի Հանրապետութեան կապերու վարչապետի հրամանագրով պարգեւատրելու մասին մէջ ներդրած աւանդի



Համար Ռոպերթ Ճոզէֆ Տոսկը (ԱՄՆ) պարգեւատրել Պատուոյ շքանշանով», - ըսուած է ՀՀ նախագահի հրամանագրին մէջ:

### ԱՆ Ճնշում Պէտք Զէ Գործադրէ

Շարունակուած էջ 1-էն

Միրզոյեանը նկատած է, որ յարաբերութիւններու զարգացումը բարեկամ երկրի մը հետ պէտք չէ ըլլայ մէկ այլ բարեկամ երկրի հաշուոյն: Աժ նախագահը տեղեկացուցած է նաեւ, որ Հայաստանը հետաքրքրուած է ԱՄՆ-ի հետ յարաբերութիւնները զարգացնելով:

Միրզոյեանը իր «Ֆէյսպուք»-ի էջին տեղեկացուցած է, որ շատ հետաքրքիր եւ բուռն քննարկում տեղի ունեցած է:

Աթլանթեան Խորհուրդէն ներս խօսած են նաեւ Հայաստանի ներքին ու արտաքին օրակարգերու այլ կարեւոր հարցերու՝ Արցախեան հիմնախնդրէն մինչեւ դատախարակական բարեփոխումներ: Միրզոյեանը ընդգծած է Հայաստանի մէջ դատախարակական բարեփոխումներու անհրաժեշտութիւնը եւ կաշառակերութեան դէմ պայքարը: «Այսօրուայ իշխանութիւնը ունի ուժեղ քաղաքական կամք եւ հաւատարմութիւն ժողովրդավարական արժէքներու, կաշառակերութեան դէմ պայքարի

եւ օրէնքի գերակայութեան հաստատման համար», - ըսած է Միրզոյեանը:


Օրուայ ընթացքին Ազգային ժողովի խօսնակը National Endowment for Democracy կազմակերպութեան կառավարող խորհուրդի հետ քննարկած է քաղաքական հասարակութեան եւ մետախային աջակցութեան տրամադրման հարցը:

Ուաշինկթընի մէջ Հայաստանի դեսպանատունէն ներս Արարատ Միրզոյեանը ընդունած է Միջազգային հանրապետական հիմնարկի փոխնախագահ Սթիվ Մեքիթը: Կողմերը քննարկած են Ազգային ժողովի կարողութիւնները զարգացմանն ուղղուած համատեղ ծրագրերու օրակարգը:

Օրուայ աւարտին Աժ նախագահի գլխավորած պատուիրակութիւնը հանդիպած է Ուաշինկթընի մէջ հայ համայնքի ներկայացուցիչներու հետ եւ միտքեր փոխանակած Հայաստանի մէջ տեղի ունեցող վերջին զարգացումներու եւ խորհրդարանի աշխատանքներու վերաբերեալ:

### Թուրքիոյ Մէջ Հարցապնդուողներուն 61 Տոկոսը Հայաստանը Սպառնալիք Կը Համարէ

Պոլսոյ Քասիր Հաս համալսարանի Թուրքիոյ շուրջ ուսումնասիրութիւններու կեդրոնը հետաքրքիր հետազոտութիւն իրականացուցած է՝ պարզելու Թրքական հասարակութեան մօտեցումը երկրի արտաքին քաղաքական օրակարգին առնչուող շարք մը հարցերուն վերաբերեալ: Հարցման մասնակցած է ընկերային տարբեր խումբերու պատկանող, քաղաքական եւ կրօնական տարբեր հայեացքներով 1000 քաղաքացի Թուրքիոյ 26 նահանգներէն:



Ուշագրաւ է, որ հարցուածներու 61,2 տոկոսը Հայաստանը Թուրքիոյ համար սպառնալիքներ կախարհող երկիրներու շարքին դասած է: Հարցման մասնակցած քաղաքացիներու 81,3 տոկոսի կարծիքով՝ Թուրքիոյ անվտանգութեան ամէնէն շատ սպառնացող երկիրը ԱՄՆ-ն է, որուն կը յաջորդեն Իսրայէլը, Ֆրանսան եւ Անգլիան: Թուրքիոյ բարեկամ երկիրներու շարքին առաջին տեղը կը զբաղեցնէ Ատրպէյճանը՝ այս համոզմունքը կը կիսէ հարցուածներու 65,3 տոկոսը: Բարեկամ երկիրներու շարքին են նաեւ միջինասիական պետութիւնները՝ Ղազախստանը, Ուզպէստանը, Ղրղըստանը:

Եւրոմիութեան հետ յարաբերութիւններու վերաբերեալ հարցման մասնակիցներու 61,1 տոկոսը

նշած է, որ կ'աջակցի Թուրքիոյ անդամակցութեան եւրոպական ընտանիքին: Այնուհանդերձ, քաղաքացիներու միայն 32 տոկոսը կը հաւատայ, որ Թուրքիան երբեք եւրոմիութեան անդամ երկիր կը դառնայ: Այս գործընթացին որպէս գլխավոր խոչընդոտ նշուած է Թրքական եւ եւրոպական հասարակութիւններու միջեւ կրօնի եւ ինքնութեան տարբերութիւնը: Փոխարէնը, քաղաքացիներու 27,8 տոկոսը կը կարծէ, որ պէտք է Թրքական միութիւն հիմնել:

Զուգահեռաբար՝ հարցուածներու կէսէն աւելին կարեւորած է Ռուսաստանի հետ յարաբերութիւնները եւ կողմ արտայայտուած ռազմավարական գործընկերութեան խորացման: Նոյնը կարելի չէ ըսել ԱՄՆ-ի մասին. հարցման մասնակիցներու համոզմամբ՝ արտաքին հարթութեան վրայ Թուրքիոյ համար ամէնէն խնդրալարողը ԱՄՆ-ի հետ յարաբերութիւններն են: Արտաքին քաղաքական միւս մարտահրաւէրներու շարքին են սուրիական պատերազմն ու ահաբեկչութեան դէմ պայքարը:

### Ստեփանակերտ Կ'ողջունէ

Շարունակուած էջ 1-էն

յացուցչի գրասենակի անձնակազմի ընդլայնում», - նշած է Անի Սարգսեանը իր մեկնաբանութեան մէջ՝ համոզմունք յայտնելով, որ հրադադարի ռեժիմի հետեւողական ամրապնդումը, այդ շարքին՝ միջազգային վերահսկման մեխանիզմներու ներդրման միջոցով, պիտի նպաստէ խաղաղ կարգաւորմանն ուղղուած արդիւնաւէտ բանակցութիւններու համար բարենպաստ միջավայրի ստեղծման:

«Արցախեան կողմը բազմիցս ընդգծել է խաղաղ գործընթացը շարունակելու համար պայմանների ստեղծման կարեւորութիւնը եւ հանդէս եկել շփման գծին լարուածութեան թրուլացման եւ վտանգութեան ամրապնդման միջոցառումների իրականացման վերաբերեալ տարբեր կառուցողական նախաձեռնութիւններով: Որպէս վերջին օրինակներէն մին կարելի է նշել պաշտօնական Ստեփանակերտի պատրաստակամութիւնը՝ միջազգային միջնորդներուն տրամադր-

րել արցախեան կողմի տեղադրած սահմանային իրավիճակի տեսահսկման համակարգի տուեալները: Աւելին, շփման գծի մշտական տեսադիտարկման տուեալ համակարգը կարող է դառնալ հրադադարի ռեժիմի վերահսկման միջազգային մեխանիզմի բաղկացուցիչ մաս:

Դժբախտաբար, ատրպէյճանական կողմը հետեւողականօրէն մերժում է ինչպէս արցախեան կողմի, այնպէս էլ միջնորդների կողմից արուած առաջարկութիւնները՝ միտուած ատրպէյճանադարաբաղեան հակամարտութեան գոտում լարուածութեան նուազեցմանը, այդ թւում՝ ԱՄՆ քոնկրէսականներ կիտ Ռոյտի եւ էլիթի ինկլի նախաձեռնութիւնը, որն ԱՄՆ ֆոնկրէսում երկու կուսակցութիւնների կողմից մեծ աջակցութիւն ստացաւ», - ըսուած է Լեւոնային Ղարաբաղի արտաքին գործոց նախարարութեան խօսնակի մեկնաբանութեան մէջ:

Օրինագիծը անցած է ձայներու 234 կողմ, 195 դէմ յարաբերակցութեամբ:

### Հենրիկ Մխիթարեան Լոս Անճելըսի Մէջ

Շարունակուած էջ 1-էն

Ալեքս Գօճապապեան: Բացման խօսքը կատարեց Հայաստանի աւագ հիւպատոս Պրն. Արմէն Պապուրդեան: Ան նախ շնորհակալութիւն յայտնեց ներկայներուն, ապա ըսաւ թէ ֆուլթայրը միայն մարզական խաղ չէ, այլ երկիրներու միջեւ բարեկամական ու ընկերային միջնորդ եւ համագործակցութեան ոգի ստեղծելու միջոց:

Հենրիկ Մխիթարեան շնորհակալութիւն յայտնեց Լոս Անճելըսի հիւպատոսութեան, այս առիթով ընծայելու եւ ծանօթանալու հայ գաղութի մարզական կեանքին ու գործունէութեան: Ան խօսեցաւ իր անձնական փորձառութիւններուն մասին ու մաղթեց, որ Հայաստան աւելի գաղկտայ ֆուլթայրին: Այս առթիւ Մխիթարեան Հիւպատոսին նուիրեց «Արմէնալ» խումբի շապիկը:

# Արեւելեան Գործընկերութիւնը՝ Որպէս Ժողովրդավարական Փոխակերպման Գործօն



Յուլիսի 11-ին Վրաստանում մեկնարկեց Պաթումի 16-րդ միջազգային համաժողովը՝ նուիրուած Արեւելեան գործընկերութեան 10-ամեակին եւ վերջին տասնամեակում գրանցուած ձեռքբերումների ամփոփման:

Համաժողովին բացման խօսքով հանդէս եկան Վրաստանի արտաքին գործերի նախարար Դաւիթ Չալկալիանին, Վրաստանի վարչապետ Մամուկաչ Բախտաձեն, ինչպէս նաեւ երկրի նախագահ Սալոմէ Ջուրաբիշվիլին: Եւրոպական խորհրդի անունից ելոյթ ունեցաւ վերջինիս նախագահ Դոնալդ Թուսկը՝ «Եւրոպան Նոր Տասնամեակի Նախաշնչն է» խորագրով:

Հայաստանի ԱԳ նախարար Զոհրապ Մնացականեանը ելոյթ ունեցաւ երրորդ նստաշրջանում՝ «Արեւելեան Գործընկերութիւնը՝ Որպէս Ժողովրդավարական Փոխակերպման Գործօն» խորագիրը կրող քննարկմանը:

Արեւելեան գործընկերութեան՝ որպէս ժողովրդավարութեան իմաստն ուղղուած նախաձեռնութեան համատեքստում նախարար Մնացականեանը նշեց, որ Արեւելեան գործընկերութիւնը պարզապէս Եւրոպական հարեւանութեամբ բնորոշուող ինչ-որ տարածաշրջան չէ, այլ ընդհանուր արժէքների վրայ հիմնուած Եւրոպայի մասն է: «Դրանք մեր ընդհանուր արժէքներն են արժէքներ, որոնք մենք ընտրեցինք որպէս մեր պետական կերտման հիմք 1991թ. անկախութեան հռչակման առաջին իսկ օրուանից: Երբ մենք օրինագիծ ենք մշակում, ապա այն ուղարկում ենք հէնց Վենետիկի յանձնաժողովին, այլ ոչ թէ այլ կառույցի, քանի որ մենք ցանկանում ենք դիտարկել այդ օրինագծի համապատասխանութիւնը Եւրոպական չափանիշներին: Եւ հէնց այս համատեքստում է, որ Եւրոպական միութիւնը 28 տարի շարունակ եղել է Հայաստանի համապարփակ անվտանգութեան ճարտարապետութեան հիմնաստիններից մէկը հէնց ժողովրդավարական կառույցների ամրապնդման, արժէքների ներդրման տեսանկիւնից»: Այս համատեքստում Հայաստանի ԱԳ նախարարը կարեւորեց հանրային կառույցների դերը՝ արժէքները կիրառական դարձնելու առումով: Նախարարի խօսքով՝ ԵՄ-ն իր շարունակական աջակցութեամբ եւ ամուրի նստիտուտների կառուցման մէջ ներգրաւուածութեամբ ստանձնել է Հայաստանում իրապէս ուժեղ ժողովրդավարութիւն կառուցման գործում կարեւոր գործընկերող դերը. սա է ընկած ԵՄ հետ համագործակցութեան առանցքում:

«Ժողովրդավարութիւնը Հայաստանի մասին է: 2018 թ. Ապրիլին եւ Մայիսին Հայաստանում տեղի ունեցած իրադարձութիւնները ի ցոյց դրեցին Հայաստանի կառույցների ուժը եւ կարողութիւնը՝ արձագանքելու նմանօրինակ փոփոխութիւնների եւ մեզ բարձրացնելու ժողովրդավարութեան գարգացման առաւել բարձր մակարդակի: Սա մի բան էր, որ հնարաւոր չէր անել մէկ օրում. սա տարիների ընթացքում պետական կառույցների, քաղաքացիական հասարակութեան, մամուլի ամրապնդման արդիւնք էր»: Իր խօսքում Զոհրապ Մնացականեանն արձանագրեց, որ առկայ են ժողովրդավարութեան յետընթացի, մարդու իրաւունքների արժեգրկման միտումներ, ինչն իրապէս մտահոգիչ է եւ ենթադրում է միասնական ջանքերի գործադրում:

ԱԳ նախարար Մնացականեանն ընդգծեց, որ 2018 թ. կարեւոր առաջընթացի տարի էր, որը վերաբերում էր բացառապէս Հայաստանին եւ որեւէ առնչութիւն չունէր աշխարհաքաղաքականութեան հետ. իրողութիւն, որը հէշտ չէր գործընկերներին ներկայացնելու առումով: «Մենք շատ համբերատար անդրադառնում էինք այս հարցին. Հայաստանում տեղի ունեցածն աշխարհաքաղաքական գարգացում չէ: Պէտք է փորձել ինչ-որ արտաքին ենթատեքստ փնտռել Հայաստանի ներքին քաղաքական գործընթացներում, քանի որ դրանք պարզապէս չկան»:

Արեւելեան գործընկերութեան երկրների անվտանգութեան մարտահրաւերի համատեքստում Հայաստանի ԱԳ նախարարն ընդգծեց. «Հայաստանի համար թուրքիան հանդիսանում է անվտանգութեան սպառնալիք: Արդէն 27 տարի է՝ թուրքիան մերժում է Հայաստանի հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատել եւ շարունակում է Հայաստանի շրջափակման քաղաքականութիւնը, որն ուղեկցում է արդարութեան ժխտողականութեամբ. սա անվտանգութեան սպառնալիք է մեզ համար»:

Իր ելոյթում նախարար Մնացականեանը յոյս յայտնեց, որ ընդհանուր եւրոպական արժէքները չեն ստորադասուի նոր գործընկերներ, նոր հնարաւորութիւններ, դիվերսիֆիկացման ուղիներ փնտռելու ճանապարհին, եւ ԵՄ-ն անսասան կը լինի դրանք պահպանելու իր սկզբունքային դիրքորոշման մէջ:

Իր ելոյթում նախարար Մնացականեանն ընդգծեց նաեւ քաղաքացիական հասարակութեան առաջնահերթ կարեւորութիւնը՝ շեշտելով, որ անհնար է հաշուի չառնել նրանց դերակատարութիւնը, քանի որ նրանք հանրային

# Վենետիկի Յանձնաժողովի Զեկոյցը Հայաստանի Վերաբերեալ



Վենետիկի յանձնաժողովը Վենետիկի մէջ Յունիս 21-22-ը 119-րդ լիազուարդ նիստի արդիւնքներով հրապարակած է փաստաթուղթ, որուն մէջ անդրադարձած է Հայաստանի մէջ կատարուող իրադարձութիւններուն:

Ստորեւ կը ներկայացնենք փաստաթուղթին մէջ Հայաստանի վերաբերեալ յօդուածի ամբողջութիւնը.

Պարոն Մարքերթը յիշեցուցած է, որ անցեալ տարի Հայաստանի մէջ խաղաղ յեղափոխութիւն տեղի ունեցած է, որ կը համապատասխանէ Սահմանադրութեան հիմունքներուն: Սակայն դատական իշխանութիւնը շատերու կողմէ զնահատուած է որպէս փտտած համակարգ:

Հայաստանի նախկին նախագահ Ռուբերթ Քոչարեանը գրաւի դիմաց ազատ արձակելու դատարանի որոշումէն ետք Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը կտրուկ քննադատութեան ենթարկած էր դատարաններն ու իր կողմնակիցներուն կողմէ արգելափակելու դատարաններու շէնքերը եւ վերափոխել դատական իշխանութիւնը:

Յանձնաժողովի ղեկավարը վարչապետին հասցէագրուած նամակին մէջ նշած է, որ դատարաններու նկատմամբ ակնյայտ անպատահութիւն կայ եւ որ ցանկացած միջոց պէտք է իրականացուի Սահմանադրութեան եւ միջազգային չափանիշներուն համապատասխան:

Հայաստանի իշխանութիւններու հրաւերով՝ Եւրոպայի խորհուրդի բարձրաստիճան պաշտօնեաներու պատուիրակութիւնը Մարդու իրաւունքներու եւ օրէնքի գերակայութեան հարցերով զլիաւոր տնօրէնի, ինչպէս նաեւ յանձնաժողովի քարտուղարի զլիաւորութեամբ դատական համակարգի բարեփոխումներու քննարկման համար այցելած է Հայաստան:

Կողմերը պայմանաւորուած են, որ գործող դատաւորներու համընդհանուր վեթիկը օգտակար եւ անհրաժեշտ չէ: Անոր փոխարէն հարկաւոր է ամրապնդել կարգապահական ընթացակարգերը եւ կապ հաստատել եկամուտներու յայտարարագրերու համակարգին հետ:

Այդ պատճառով Հայաստանի դատական օրէնսգիրքին մէջ հարկաւոր է մինչեւ Յուլիսի վերջ փոփոխութիւններ կատարել:

Հայաստանի իշխանութիւնները հետաքրքրութիւն ցուցաբերած են այդ փոփոխութիւններու վերաբերեալ Վենետիկի յանձնաժողովի շտապ եզրակացութեան ստացման հարցով, սակայն դեռ պաշտօնական դիմում չեն ներկայացուցած, քանի

որ փոփոխութիւնները պատրաստ չեն:

Ընդլայնուած կազմի բիւրոն իր նիստին նախաձեռնած էր շտապ եզրակացութեան նախապատրաստումը: Յանձնաժողովը թոյլատրած էր շտապ եզրակացութիւն պատրաստել Հայաստանի դատական օրէնսգիրքի բարեփոխման մասին, որ մինչեւ հոկտեմբերի լիազուարդ նիստը ուղղուած պիտի ըլլայ դիմող մարմիններուն:

Յանձնաժողովը նաեւ տեղեկացուած է այն մասին, որ Սահմանադրական դատարանի նորէն ընտրուած դատաւորը կասկածի տակ դրած է 9 դատաւորներէն 7-ի օրինականութիւնը, որոնք ընտրուած են մինչեւ 2015 թուականի սահմանադրական բարեփոխումներու ուժի մէջ մտնելը:

Անոր խօսքով՝ անոնք ընտրուած են Սահմանադրական դատարանի անդամներու կողմէ, իսկ նոր տեքստին մէջ յիշատակուած են Սահմանադրական դատարանի դատաւորները:

Սահմանադրութեան վերանայումած 231-րդ յօդուածը, այնուամենայնիւ յստակ եւ անվիճելի կերպով կը նշէ, որ մինչեւ սահմանադրական փոփոխութիւններու ուժի մէջ մտնելը ՄԻ նշանակուած ղեկավարը եւ անդամները պէտք է շարունակեն իրենց պաշտօնները զբաղցնել մինչեւ 2005 թուականի Սահմանադրութեան մէջ նշուած լիազորութիւններու ժամկէտի աւարտը:

Մտահոգութիւն կ'առաջացնէ այն, որ դատաւորի այս յայտարարութիւնը ողջունած է խորհրդարանը եւ գործող դատաւորներու մանտաթներու նկատմամբ միջամտութեան սպառնալիք գոյութիւն ունի:

Յանձնաժողովի ղեկավար ձ. Պուքիքիոյին լիազօրած է հետեւել տուեալ հարցի շուրջ զարգացումներուն եւ անհրաժեշտութեան պարագային հրապարակային ելոյթով հանդէս գալ:

Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը եւ Արդարադատութեան նախարարութիւնը յայտարարեց որ, քանի որ Եւրոխորհրդարանի «Ժողովրդավարութիւն» իրաւունքի միջոցով» եւրոպական յանձնաժողովի (Վենետիկի յանձնաժողով) 119-րդ նստաշրջանի զեկոյցի բովանդակութիւնը մամուլի մէջ շահարկումներու տեղիք տուած է եւ շարք մը հարցեր առաջացուցած, հարցի վերաբերեալ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը յառաջիկային հանդէս պիտի գայ յայտարարութեամբ:

քննարկման եւ որոշումների կայացման անբաժան մասն են կազմում: «Հայաստան-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագրի համատեքստում մենք որդեգրել ենք ընդհանուր քննարկումներ անցկացնելու նոր աշխատելաձև՝ քաղաքացիական հասարակութեան լայն ներգրաւմամբ»:

տում մենք որդեգրել ենք ընդհանուր քննարկումներ անցկացնելու նոր աշխատելաձև՝ քաղաքացիական հասարակութեան լայն ներգրաւմամբ»:

# Թուրքիան, Ինչպես Միշտ, «Քցելու» է Մոսկուային

ԿԱՐՊԻՍ ՓԱՇՏԵԱՆ

Թուրքիայի եւ ԱՄՆ-ի միջեւ գոյութիւն ունեցող լարուածութիւնը նոր երանգներ է ստանում: Մասնաւորապէս՝ Անքարան կանգնած է պատժամիջոցների սպառնալիքի առջեւ, ինչի հեռանկարը չափազանց իրատեսական է: Խնդիրը Ռուսաստանի կողմից Թուրքիային մատակարարուող Մ-400 «Տրիոմֆ» զենիթահրթիռային համակարգերն են: Չնայած Ուաշինգթոնի բազմաթիւ գոլաշարժներին, այնուամենայնիւ, Թուրքիան զնայ այդ արկածախնդրութեանը՝ ինքն իրեն ներքաշելով չափազանց լուրջ հիմնախնդրի մէջ:

Այս համատեքստում ԱՄՆ-ն ստիպուած է պատժամիջոցներ կիրառել, քանի որ դա է օրէնքի պահանջը, չի բացառուում նաեւ, որ քննարկման առարկայ դառնայ ՆԱՏՕ-ին Թուրքիայի անդամակցութեան հարցը: Շատ փորձագէտներ համոզմունք են յայտնում, որ Անքարայի հեռացումը միայն ժամանակի հարց է:

ՆԱՏՕ-ից Թուրքիայի հեռացման կանխատեսումների հետ գուրզութեան առաջնային պլան են մղուում նաեւ ռուս-թուրքական փոխյարաբերութիւնների էլ աւելի մերձեցման հեռանկարները, քանի որ Մ-400 համակարգերի մատակարարման գործարքը առաջին հերթին դիտարկուում է որպէս Մոսկուայի եւ յատկապէս Փոլիտիկայի յաղթանակը:

Ի դէպ՝ այնպէս չէ, որ Թուրքիայի եւ ԱՄՆ-ի լարուած փոխյարաբերութիւնները սահմանափակուում են միայն Մ-400 համակարգերի մատակարարման հանգամանքով: Անվտանգութեան միջոցառումները փոխյարաբերութիւնների կոնֆլիկտային բնույթը շատ աւելի խոր արմատներ ունեն՝ կապուած Սիրիայում եւ տարածաշրջանային այլ կէտերում շահերի բախմամբ:

Բայց անկախ ամէն ինչից, կարծես թէ, մամուլն ու փորձագէտները իրենց վերլուծութիւններում եւ կանխատեսումներում մեղմ ասած խտացնում են գոյներն ու առաջ քաշում իրադարձութիւնների զարգացման անհասանաքանակ սցենարներ: Նախ՝ չափազանց անհասանաքանակ է թուում Թուրքիայի ՆԱՏՕ-ից հեռացման վարկածը: Որքան էլ ԱՄՆ-ի եւ Թուրքիայի յարաբերութիւնները սրուած լինեն, միեւնոյն է, նոյնիսկ պատժամիջոցների առկայութեան պայմաններում դա չափազանց ծայրայեղական լուծում կը լինի, որից վստահաբար փորձելու են խուսափել բոլոր կողմերը:

Խիստ չափազանցուած են նաեւ Ռուսաստան-Թուրքիա փոխյարաբերութիւնների մերձեցման մասին վերլուծութիւնները, որոնց ամենաանհասանաքանակ դրսեւորումը հնարաւոր դաշինքի վերաբերեալ խօսակցութիւններն են: Նմանատիպ կարծիքներ հիմնականում տարածուում են ռուսական մամուլի կողմից, որտեղ առաջնային պլան են մղուում հակամերիկեան քարոզչութիւնն ու ԱՄՆ-ի գլխաւոր դաշնակցի հետ ապագայում ալիանս կազմելու քարոզչական թէզը:

Մի կողմ թողնելով բոլոր այս խօսակցութիւններն ու փորձենք հասկանալ իրերի իրական դասաւորութիւնն ու կարգը՝ քարոզչական ու ծայրայեղական ձեւակերպ

պուաներից անդին:

Վերադառնանք Թուրքիա-ԱՄՆ առաջին հայեացքից անլուծելի թուացող ճգնաժամին: Իսկապէս առաջին հայեացքից, քանզի Թուրքիան այն խաղաղողներից չէ, որն այս կամ այն պետութեան հետ կարող է մտնել երկարաժամկէտ հակամարտութեան կամ էլ դաշինքի մէջ: Գործ ունենք չընդհատուող պետականութեան հետ, որն ունի արտաքին քաղաքականութեան լաւագոյն աւանդույթները: Սառը պատերազմի ակարտից եւ թուացեալ «սեւ ու սպիտակ» աշխարհակարգի անէացումից չետոյ, Թուրքիան ներկայումս աւելի քան երբեք յայտնուել է միջազգային քաղաքական շահեկան պայմաններում: Բանն այն է, որ արդէ աշխարհակարգում Անքարան ունի մաներեւոյթ, աշխարհաքաղաքական տարաբնույթ բեւեռների միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնները խաղարկելու շատ աւելի լայն սպեկտր, քան նախկինում: Որքան էլ սրուած լինեն Թուրքիա-ԱՄՆ փոխյարաբերութիւնները, այնուամենայնիւ, Անքարան չի կորցրել Չըրչիլի բնորոշած զարկերակի կարգավիճակը, որը զաղութները կապուում էր մետրոպոլիայի հետ: Ճիշտ է, ժամանակակից աշխարհում ո՛չ զաղութները կան եւ ո՛չ էլ մետրոպոլիան, բայց Թուրքիան դեռեւս չի կորցրել զարկերակի իր նշանակութիւնը: Այսինքն՝ երկարաժամկէտ հակամարտութեան մասին խօսք անգամ լինել չի կարող: Կայ շահերի բախում, որն այսօր վերածուել է քարոզչական առճակատման, իսկ վաղը կարող է վերածուել բարեկամութեան: Այսինքն՝ չի բացառուում, որ որոշ ժամանակ անց Մ-400 համակարգերի հետ կապուած հակամարտութիւնը մոռացութեան մատնուի, եւ կողմերը յայտնուեն փոխյարաբերութիւնների բոլորովին նոր հարթութիւնում:

Նոյն տրամաբանութեան մէջ պէտք է դիտարկուեն նաեւ ռուս-թուրքական փոխյարաբերութիւնները:

Երկրներն այդ կապուած են տնտեսական, հնարագործական կապերով, եւ դրանց խաթարումը կամ կանխարգելումը լուրջ հետեւանքներ կ'ունենայ երկու կողմերի համար էլ՝ ինչպէս պատժամիջոցների տակ գտնուող Ռուսաստանի, այնպէս էլ ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի հետ լուրջ խնդիրներ ունեցող Թուրքիայի: Անկախ փոխյարաբերութիւնների կարգավիճակից՝ տնտեսական համագործակցութիւնը երբեք չի ընդհատուի: Յիշեցնենք՝ ռուս-թուրքական գրեթէ բոլոր պատերազմների ժամանակ Ռուսաստան-Թուրքիա տնտեսական գործունէութիւնը հիմնականում չի կանխարգելուել եւ բնականոն շարունակուել է, իհարկէ այնքան, որքան որ հնարաւոր է եղել պատերազմական իրավիճակներում: Եթէ խնդրոյ առարկան փորձենք դիտարկել պատմութեան տեսանկիւնից, ապա Ռուսաստանը գրեթէ միշտ Թուրքիայի համար ունեցել է մահակի կարգավիճակ, իսկ վերջինս էլ եղել է այն պատենը, որը կանխարգելել է Ռուսաստանի ներթափանցումը Մերձավոր եւ Միջին Արեւելք, ինչպէս նաեւ բացարձակ հեգեմոնիան Սեւ ծովում: Այս տրամաբանութիւնից ելնելով՝ Ռուսաստանը Սիրիայում խաղաց մահակի իր



Turkish Defense Ministry (Reuters)

պատմական դերը եւ կանխարգելեց Դամասկոսում ամբողջական վերահսկողութիւն սահմանելու՝ Անքարայի ձգտումները, իսկ Թուրքիան եւս մէկ անգամ այն պատենէն էր, որը թոյլ չի տալիս Մոսկուային հիմնաւոր ամրապնդուել Մերձավոր եւ Միջին Արեւելքում: Բայց կողմերի փոխյարաբերութիւններում բնորոշ է եղել նաեւ Ռուսաստանի՝ Թուրքիայի համար ժամանակաւոր այլընտրանքի կարգավիճակը, մասնաւորապէս՝ 1831-33թթ. Թուրք-եգիպտական պատերազմի ժամանակ Նիկոլայ առաջինը եւ ռուսական նաւատորմը բառացիօրէն Օսմանեան կայսրութիւնը փրկեցին կործանումից ու մասնատումից եւ, ի վերջոյ, Առաջին աշխարհամարտում ջախջախուած, մասնատուած Թուրքիան կարողացաւ վերակենդանանալ եւ նոր շունչ առնել խորհրդային Ռուսաստանի ֆինանսական եւ ռազմական օգնութեան միջոցով:

Ձեր գնացքը բարի եւ երթը բարի, ո՞վ ազգի ու հայրենիքի անսակարկ զոհաբերութեան «նորապսակ» նուիրեալներ, որ աշխարհը կը դառնաք՝ Հայաստանի եւ հայութեան ազգային շահերը հետապնդելու եւ ոչ՝ ձեր սեփական շահերը ապահովելու. ձեզի կը վաճի կրկնել խօսքը բանաստեղծ Յովհաննէս Շիրազի, որ կ'ըսէ.

Քո փառքի համար թէ մի օր վառուեմ,  
Մոխրաքիծ անգամ ինձմից չի մնայ:

## Հայ Մամուլը իր Տարբեր Ոլորտներուն Մէջ

### ԴՈԿՏ. ԳՐԱՅՐ ԵՒՊԵՏԵԱՆ

Հայկական մամուլը մեր հայ ժողովուրդի ամբողջ պատմութեան իր կարեւոր ներգործութիւնը ունեցած է մեր ազգային եւ մշակութային կեանքի տարբեր ոլորտներուն մէջ: Եւ այս իմաստով՝ եւ երեւի ցեղասպանութենէ ետք՝ երբ սփիւռքեան տարբեր գաղթօճախներու մէջ մեր կեանքերը ուղեցինք վերաշինել՝ եկեղեցիի եւ դպրոցի կողքին՝ նաեւ զարկ տուինք մամուլին որպէս մեր գոյատեւելու մէկ զբաւականը: Ահա թէ ինչու՞ մամուլը դարձաւ խիստ կարեւոր իրականութիւն մեր համահայկական կեանքերուն համար: Եւ հոստեղէ պիտի բարձր կարեւորել եւ արժէտորել Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառի մտալոյզացումը այս մեծ ժողովին՝ որովհետեւ մամուլը իր կարեւոր տեղը ունի մեր կեանքի շարունակականութեանը մէջ:

Մամուլին դերը արժէ դիտարկել իր երեւցող ու տակաւին չերեւցող երեւոյթներով: Եթէ երեւցողը լուրերու եւ տեղեկութիւններու ու տակաւին գրականութեան հրապարակագրութեան եւ բազմազան թղթակցութիւններու սփռումն է իր տարբեր ձեւերով՝ տպագիր եւ անցումային՝ բաց կը մնայ չերեւցող երեւոյթը...: Եւ այդ մամուլի շնորհած պատգամին եւ նոյն այդ պատգամին յանձնարութիւնը եւ ընկալումն է (եւ որուն կը յաջորդէ իւրաքանչիւրիս կեանքին համար այդ ընկալուած պատգամին կիրարկումը) ընթերցողին եւ հասարակութեանը ընդհանրական կեանքերուն համար: Եւ այս պատգամը եւ անոր ընկալում-կիրարկումն է որ մամուլը կը դարձնէ խիստ կարեւոր միջոցառում՝ ի մասնաւորի մեզի հայրենու՝ մեր շատ մը հիմնահարցերու մէջէն ու անոնց համար:

Իսկ պատգամը՝: Ունի տարբեր շերտեր: Կայ ներ-հայկական իրականութեանը մէջ լեզուի ու ինքնութեան ու տակաւին մշակոյթի՝ եւ իր ամբողջական հասկացողութեանը մէջէն՝ պահպանումը եւ սատարումը: Կայ մամուլի միջոցաւ գիրար հասկնալու իմա «ուրիշը»՝ որ կրնայ տարբեր ըլլալ բաց անհրաժեշտ է զայն ընդունելով: Եւ այս առանցքին՝ եւ մեկնելով մեր սփիւռքեան իրականութեան պրիսմակէն՝ Հայաստան-Ղարաբաղ եւ Սփիւռք իրար հետ գտեպնդելու եւ գօտեպնդելու անհրաժեշտութիւնը: Արտաքին իրականութիւնը պիտի ընդգրկէ մամուլի միջոցաւ հայը

զետեղել շրջանային ու միջազգային կեանքի մեծ քարտէզին վրայ՝ հասկնալու համար աշխարհը եւ անոր հետ առնչելու եւ առնչուելու գիտակցութիւնը: Ահա թէ ինչու՞ մամուլը կը դառնայ հաւաքականութեանը հայելին՝ ուր իւրաքանչիւրս կը տեսնենք մենք մեզի՝ որպէս անհատ եւ հաւաքականութիւն՝ բաց նաեւ կը լսենք: Կը լսենք խօսքը մեր կեանքերուն համար: Խօսքը՝ ուր իւրաքանչիւրս կը լսենք եւ կ'ընկալենք այն՝ որուն միջոցաւ պիտի գիտակցինք հայկական ընդհանրական կեանքը նաւարկելու հրամայականը:

Եթէ այս բոլորը մամուլի դերին ու կարեւորութեանը դիտանկիւնէն՝ բաց ինչ՞ է հիմնական կարեւորութիւնը եւ գործօններդրումը մամուլին յառաջիկայի տարիներու վրայ երկարած:

Մեր համահայկական հիմնահարցերը չեն նուազիր այլ կը բազմանան: Եւ այս տարբեր մակարդակներու վրայ եւ նաեւ բովանդակութեամբ: Այս իմաստով՝ պիտի հարց տալ: Ինչ՞ կրնան ըլլալ մամուլի դերը մեր այս բոլոր հիմնահարցերու մէջէն տոկալու ու շարունակելու հաւաքական մեր կեանքերուն մէջ եւ իր տարբեր ու բազմաբնոյթ հարցերու մէջէն: «Տոկալ» կ'ըսենք՝ քանի սկսած ենք «լուրերութեան» նշաններ ցոյց տալ մեր ազգային կեանքերուն տարբեր ոլորտներուն մէջ՝ ըլլայ այդ համահայկական կազմակերպչական մակարդակներու վրայ՝ ու նաեւ առաջնորդութեան եւ հասնելով հայկական անհատական կեանքերու:

Պէտք ունինք դրական ուժին ներգործութեան (positive energy): Եւ մամուլը պարտի այս դրական ուժի ներգործութիւնը սրակել մեր ազգային կեանքերուն մէջ: Այն «դրականը» ու այն «ուժը» որ պիտի մղէ մեզ երթալու հորիզոնէն անդին: Եւ մամուլը ու իր պատգամ - խօսքը՝ եթէ մէկ կողմէ առարկայական, գիտական ու վերլուծական միտքով՝ բաց նոյնքան նաեւ ազգային հպարտութեան գիտակցութեամբը՝ օգնելու համար հայ հասարակութեանը հասնելու համար այս դրական ուժին: Եւ այս դրական ուժով է որ հայուն գոյապայքարի կեանքերը պիտի շարունակենք:

Եւ հայ մամուլը իր տարբեր ոլորտներուն մէջէն՝ արժէ որ շարունակէ սրակել այս դրական ուժը մեր կեանքերուն մէջ:



**MARONIAN**  
INSURANCE SERVICES

We will continue to stand by your side and secure your **family** and **business** with our full range of insurance policies.

CALL US FOR A  
PERSONALIZED QUOTE

**(818) 500 9585**

805 E. Broadway, Glendale, CA 91205  
sbmaronian@gmail.com  
CA INSURANCE LICENSE # 0C99815

**MaronianInsurance.com**



HEALTH



LIFE



COMMERCIAL

Since 1975, we have proudly served your health and life insurance needs.

# Եղբորս Ընտանիքը Մեկնում է Աւստրալիա (Նորոգ Հանգուցեալ Արսէն Անասեանի Յիշատակին)

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Եղբայրս՝ Արսէնը, դեռ աշակերտական նստարանից տարուած էր «Աշխարհագրութիւն» առարկայով: Բոլոր աշխարհամասերի եւ երկրների մէջ նրա համար ամէնից շատ հետաքրքրողը Աւստրալիա աշխարհամասն էր: Դեռ պատանի տարիքից հաւաքում էր այդ՝ «կորած, մոլորած» երկրի մասին ցանկացած տեղեկութիւն, բրոշուր, ճամբորդական ուղեցոյց, մի խօսքով այն ամէնը՝ ինչ որ կապուած էր այդ հիասքանչ աշխարհամասի հետ:

Հագիւր բարձրագոյն կրթութիւն ստացած, եղբայրս սկսեց ուղիներ փնտռել՝ իր պատկերացմամբ այդ «օրհնուած» երկիրը գնալու համար:

Պիտի գար անցեալ դարի 60-ականների կէսերը, որպէսզի փոքրինչ բացուէր «երկաթեայ վարագոյրը» եւ մարդիկ կարողանային հաղորդակցուել արտաքին աշխարհի հետ: Որպէս զբօսաշրջիկ Աւստրալիա մեկնելու նրա անգուսպ ցանկութիւնը մերժուեց պատկան մարմինների կողմից՝ այնտեղից գալիք հրաւերի բացակայութեան պատճառով: Արսէնը գտաւ դրա ճարտար: Իր կնոջ՝ Լիւդմիլայի մայրը, տիկին Հռիփսիմէն աշխատում էր Արմենիա հիւրանոցի վեցերորդ յարկում:

- Եթէ Աւստրալիայից տուրիստ չայտնուէր, խնդրում եմ ինձ լուր տաս,- ասել էր նրան եղբայրս: Եւ մի օր, տիկին Հռիփսիմէն գանգահարուած է եղբորս եւ յայտնում, որ մի ազգութեամբ ուսուցիչ զբօսաշրջիկ է յայտնուել իր աշխատանքի վայրում:

- Ոչինչ, թող ուսու լինի, միայն թէ չաջողացրու, որպէսզի հանդիպեմ:

Իր որոշումների մէջ բաւական հաստատակամ եղբայրս կարողանում է արագօրէն մտերմանալ նրա հետ եւ հրաւիրել իր տուն: Մենք՝ ծնողներս եւ իմ ընտանիքը բնաւ տեղեկութիւն չունէինք այդ ամէնից եւ միայն եղբորս գոքանչի «բացբերանութեան» շնորհիւ իմացանք եղելութիւնը:

Այսպիսով «կծիկը» քանդուեց: Ամէնքս տեղեկ դարձանք եղբորս որոշմանը: Նա վճռել էր գտնել մէկին, որը կը կարողանար օգնել իրեն՝ մշտական բնակութեան համար հրաւեր ուղարկել Աւստրալիայից, բնականաբար, որպէս «ազգականի»:

Վիկտոր անունով ուսու խօսատանում է օգնել Արսէնին, եթէ նա ինչ որ ժամանակ կարողանայ Աւստրալիա հասնել: Արսէնին է տալիս Ադելաիդի տան հասցէն եւ հեռախօսի համարը:

Որոշ ժամանակ անց, Արմենիա հիւրանոցում է յայտնուում Աւստրալիայից Մարի Քիւրտեան անունով մի մեծահարուստ կին: Եղբայրս այնքան արագ է մտերմանում այդ կնոջ հետ, որ վերջինս համաձայնուում է իբր մորաքոյր՝ հրաւեր ուղարկել Աւստրալիայից:

- Դուք հոս լաւ պայմաններ ունիք Արսէն, ինչո՞ւ կ'ուզես ընտանիքդ առնել եւ Աւստրալիա տեղափոխուիլ,- հարցրեց տիկինը մեր տան մէջ:

- Դուք այս ճոխ սեղաններուն մի նայիք տիկին Մարի: Հայաստանի մէջ ամէն ընտանիք, անկախ

կարողութէնէն, այսպէս կ'ընդունի ռեւէ հիւրի: Մենք հոս բազմաթիւ խնդիրներ ունինք: Երագս միշտ եղած է Աւստրալիա գալ, պատիւ ճանչուած վայրերու մէջ: Ես քանի մը անգամ դիմեցի որպէս թուրիստ գալ, եւ ամէն անգամին ալ մերժեցին:

- Մենք բնաւ համաձայն չենք, որ Արսէնը ընտանիքով տեղափոխուի Աւստրալիա,- ասաց հայրիկս,- բայց ի՞նչ կրնանք ընել: Ինքը առանձին ընտանիք ունի եւ որոշումը իրեն կ'իյնայ:

- Հոգ մ'ընէր տիկին Վերժին, - դիմելով մօրս՝ ասաց հիւրը,- անոնք երիտասարդ են, Աւստրալիոյ մէջ կրնան տեղ մը հասնիլ: Քանի որ Արսէնին որոշումը վերջնական է՝ ես հրաւեր կը դրկեմ,- ասաց միլիոնատէր տիկին Քիւրտեանը եւ աւարտեց անհաճոյ խօսակցութիւնը:

Հրաւերը ժամանակին եկաւ: Սկսուեց քաջջուկը պատկան մարմինների հետ: Եւ դա տեւեց վեց տարի: Աւստրալիա մեկնելը եղբորս համար դարձել էր կեանքի ու մահուան խնդիր:

Արսէնի յամառութեան ու աննկուն կամքի շնորհիւ հարցը լուծուեց նրա օգտին: Աւելորդ եմ համարում նկարագրել այն հոգեկան ու բարոյական ապրումները, որոնք ծաւալուեցին մեր ընտանիքից ներս:

Ի վերջոյ եկաւ մեկնելու պահը: Կայարանի կառամատոցում, հրաժեշտի ժամանակ, երբ ինքս էլ պատրաստուում էի վագոն բարձրանալ, հայրիկս բարեկամաբար, հարգատեսի պէս դիմեց կոմունիստ խնամի տիկին Հռիփսիմին.

- Խնամի ջան, ինչո՞ւ ես կանգնել արեւի տակ, մի քիչ այս կողմ արի, շուքի տակ...

- Ոչինչ, սովետական արեւ է,- ցինկիկաբար պատասխանեց մեր խնամին:

«Սովետայան արեւը» շատ թանկ էր նստել եղբորս վրայ: Մի տեսակ զրկել նրան իրերին սթափ նայելու կարողութիւնից:

Ինչեւէ. 1972 թ. Ապրիլի 12-ին մեկնեցինք Մոսկուայ: Տեղաւորուեցինք Հայաստանից արտագաղթածներին լաւագոյնս յայտնի Չարեայ հիւրանոցում: Յաջորդ օրն իսկ գնացինք Աւստրալիայի դեսպանատուն:

Բնականաբար, ինձ չթողեցին դարպասից ներս մտնել: Ստիպուած էի դրսում սպասել ու զրոյցի բռնուել դեսպանատանը հսկող ոստիկանի հետ:

Բաւական երկար ժամանակ անցաւ մինչեւ մերոնք երեւացին երկար ծառուղու ծայրին: Ինչ որ չէին շտապում: Դա ինձ մօտ տագնապ առաջացրեց: Հագիւր մի քանի քայլ էր մնացել մինչ նրանք դուրս կը գային դարպասից, եղբորս երեսին նայելով դժուար էր նկատել, որ ինչ որ անհասկանալի, սարսափելի բան էր տեղի ունեցել, մանաւանդ, որ տաս տարեկան Յասմինն էլ լալիս էր:

Հագիւր էին մերոնք մօտեցել դարպասին, մինչ ոստիկանն ու գումը էր բացել դարպասը, մէկ էլ ծառուղու ծայրից վազելով, ու միաժամանակ բղավելով՝ «Սպասէ՛ք, սպասէ՛ք», մեզ էր մօտենում մի բարտես օրիորդ.

- Եկէ՛ք, եկէ՛ք պարոն... դեսպանը ձեզ է կանչում:

Արսէնը չհասցրեց մէկ խօսք

անգամ փոխանակել ինձ հետ: Ինչ որ մի բան այնպէս չէր, դա պարզ երեւում էր: Սպասման տաժանելի պահեր, էլ ինչ ասես, որ մտքովս էր անցնում:

- Դա՛, չտօ տօ նի տօ... (Այո՛, ինչ որ մի բան այնպէս չէ...), - կասկածներս հաստատեց ոստիկանը, որի հետ արդէն «բարեկամացել» էի: Ի վերջոյ մերոնք երեւացին արդէն ծանօթ ծառուղու երկայնքին: Այս անգամ արդէն վազելով էին մօտենում ծանօթ դարպասին:

- Հը՛, ասէ՛ք, շուտ ասէ՛ք, այդ ինչո՞ւ էր կանչել դեսպանը,- չթաքցնելով անհանգիստ վիճակս նախադարձակ եղայ ես:

- Չգիտե՛ս, ա՛խ չգիտես Հենրիկ, թէ ինչից ենք պրծել, արի՛, արի՛ շարժուենք, մի տակսի գտի՛ր, հասնենք հիւրանոց՝ ամէն ինչ կը պատմեմ,- յուզմունքից չրկացած դէմքով ասաց եղբայրս:

Պատմութիւնը հետեւեալն է. Աւստրալիայի դեսպանի եւ Արսէնի միջեւ տեղի է ունենում հետեւեալ խօսակցութիւնը.

- Ես չեմ կարող ձեզ մոտքի վրիզ տալ Աւստրալիա մեկնելու համար:

- Ի՞նչպէս թէ չէ՞ք կարող, չէ՞ որ դուք էք մեզ հրաւիրել վրիզ ստանալու համար:

- Չի՛շդ է, մենք ենք հրաւիրել, բայց պարագաները փոխուել են, ձեզ հրաւիրող անձը հրաժարուած է ձեզ ընդունել: Մենք երեկ ենք ստացել հեռագիրը: Ահա, խնդրեմ:

Դեսպանը դարակից հանում է հեռագիրը եւ մեկնում Արսէնին՝

- Ահա, խնդրեմ, կարդացէ՛ք: Մի երկու վայրկեան հեռագիրը կարդալուց յետոյ, մի բուռ դառած եղբայրս ահաւոր ընկճուած վիճակում հագիւր կարողանում է ասել.

- Բա մենք ի՞նչ ենք անելու պարոն դեսպան, մենք չենք կարող ետ գնալ, մենք ոչինչ չունենք Հայաստանում. Տուն, տեղ, աշխատանք, ոչինչ... Հայաստանին կապող ոչ մի օղակ չի մնացել, ո՞ւր գնանք, ի՞նչ անենք:

- Հասկանում եմ, մտնում եմ ձեր վիճակի մէջ, բայց ոչինչ անել չեմ կարող: Գնացէ՛ք Երեւան, ձեր հարազատների մօտ, խնդրեք ձեր հովանաւորողին փոխել իր որոշումը: Իսկ հիմա ազատ էք, կարող էք գնալ:

Արսէնը գլխահակ շարժուած է ելքի ուղղութեամբ, իսկ Լիւդմիլան փորձում է հանգստացնել աղիողորմ լաց եղող աղջկան՝ Յասմինին: Դեսպանը լճու, ձեռքերը կրծքին խաչ արած դիտում է այս սրտաճմլիկ տեսարանը:

Երբեւէ նման երեւոյթի ականատես չեղած դեսպանի քարտուղարուհին աչքերից չի կարողանում հեռացնել թաշկինակը, եւ անձարակ մօտեցումով փորձում օգնել Լիւդային եւ Յասմինին դուրս գալ սենեակից:

Ահաւոր, սահմուկեցուցիչ տեսարանից ցնցուած երիտասարդ դեսպանը արթնանում է կարծես թմբիրից ու ինքնիրեն մեղադրում եղածի համար. «Այս ինչ արեցի, Աստուած իմ, ներիր, ներիր ինձ, ես կործանեցի մի երիտասարդ ընտանիք...», եւ մէկ վայրկեան մոռանալով, որ ինքը մի խոշոր երկրի դեսպանն է, արդէն որպէս մարդ, որպէս ազնիւ մարդ, խախտելով իր երկրի խստագոյն օրէնքը՝ կանչում է քարտուղարուհուն.

- Զէնի՛, շուտ արա, արագ վազիր նրանց ետեւից եւ ետ կանչիր քանի դեռ դուրս չեն եկել դարպասից:

Բարեբախտաբար, ինչպէս վերելում ասացի, Զէնին հենց դարպասի պոռնկից մերոնց տանում է դեսպանի մօտ:

- Նստեցէ՛ք, տեղաւորուէ՛ք ինչպէս հարմար էք գտնում: Ուշադիր լսէ՛ք թէ ինչ եմ ասելու: Այն՝ ինչ որ ձեզ հիմա կ'ասեմ, երբեք այս պատերից պիտի դուրս չգայ: Երբեք, հասկանո՞ւմ էք: Ձեր ողջ կեանքում ոչ ոք պիտի չիմանայ մեր այս խօսակցութեան մասին, նոյնիսկ ձեր հարազատները: Ուրեմն այսպէս. հասկանալով ձեր անելանելի վիճակի բարդութիւնը, մարդկայնօրէն ցաւ զգալով ձեր հետագայ ճակատագրի համար, ես, թէեւ մի խոշոր երկիր ներկայացնող պաշտօնեայ, յօգուտ ձեր ապագայ երջանկութեան, կոպիտ խախտում եմ թոյլ տալու:

Մինչ մերոնք ակնապիշ նստում էին երիտասարդ դեսպանին առանց նրան ընդհատելու, վերջինս մի փոքր դադարից յետոյ շարունակեց.

- Այսօր Ապրիլի 16-ն է: Ես ձեր անձնագրերում վրիզայի թուականը դնում եմ յետին ամսաթիւով, հեռագիրը ստանալուց մի քանի օր առաջուայ ամսաթիւով: Ձեր բարեկամն անշուշտ ստուգելու է թէ ձեզ երբ է վրիզ տրուել: Ստուգելուց յետոյ նա կը համոզուի, որ իր հեռագիրը տեղ է հասել ձեր վրիզաները ստանալուց յետոյ: Աղջիկս դու ամէն ինչ հասկացա՞ր,- շոյելով Հասմինի արցունքոտ թշերը,- հարցրեց դեսպանը:

- Մանր, շատ ծանր եղաւ մեր բաժանումը: Եղբորս ընտանիքին ճանապարհելուց յետոյ, հենց նոյն օրն իսկ վերադարձայ Երեւան:

\*\*\*  
Հետաքրքիր է այս պատմութեան շարունակութիւնը:

Եղբայրս իր ընտանիքով շատ հանգիստ հասնում է Սիտնի: Վերջակէտը Մելբուրնն է: Այնտեղ է բնակուում մեծահարուստ տիկին Մարի Քիւրտեանը: Ըստ նախօրօք պայմանաւորուածութեան, Արսէնը գանգահարում է նրան:

- Ի՞նչ... Արսէն, դո՞ւն ես, ի՞նչպէս եկար Սիտնի... Ի՞նչպէս կըլլայ, չէ՞ որ ես թէլեգրամ ղրկած եմ Մոսկուա եւ յայտնած, որ չեմ կրնար ձեզ ընդունիլ: Դուն ե՞րբ վրիզաները առիր:

- Տասը օր առաջ,- բացայայտ ձեւով ստում է եղբայրս:

- Հա՛, ըսել է ուշացեր եմ: Հիմա ուշադիր մտիկ ըրէ: Ինչպէս ըսի՛ ես ձեզի չեմ կրնար ընդունիլ: Սակայն, քանի որ եկած էք, ստիպուած եմ մէկ շաբթուան համար տեղ տալ ձեզի, անկէ վերջ՝ ինչ կ'ուզէք ըրէք: Ինչեւէ, թուե՛նք առէ՛ք եւ եկէ՛ք:

Հասնելով Մելբուրն, մերոնք անակնկալի են գալիս: Ոչ ոք չկայ իրենց դիմաւորող: Ի՞նչ անել: Նորից են հեռաձայնում տիկին Մարիին:

- Մէկը չունիմ, որ ձեզ դիմաւորէ, թաքսի առէ՛ք եւ եկէ՛ք,- լինում է պատասխանը:

Տակաւ վարորդն էլ հասկանալով, որ իր յաճախորդները օտար են եւ լեզուն էլ չգիտեն, 40 րոպէ քաղաքով մէկ պտտելուց յետոյ մեքենան կաննեցնում է մի շքեղ ապարանքի առջեւ ու ցոյց է տալիս հաշուի չի վրայի գումարը՝ 70 դոլար: Դժուար է պատկերացնել թէ ինչ ասել է այդքան գումար, էն էլ այդ տարիներին, եւ, մանաւանդ սովետից ժամանած մարդու համար:

# «Եւրոպիացի Յայ Կինը»

## ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՏ

Հայ լեզուաբան, գրականագետ, բժշկական գիտելիքներու քարոզիչ Յովհաննէս Գազանճեան ծնած է Սեբաստիոյ նահանգի Եւրոպիա գաւառի նոյնանուն քաղաքին մէջ. իր աշխատութիւններուն մէջ չափազանց մեծ տեղ տուած է հայրենի Եւրոպիա գաւառի սովորութիւններուն, բարբառին:

Գեղարուեստական, նկարագրական իր գործերէն գատ, Յովհաննէս Գազանճեան 1՝9 թուակաշին, Յ. Գասարճեանի համահեղինակութեամբ, կը գրէ «Գաղտնիք եւ արուեստ մոգութեան» աշխատութիւնը: 1909 թուականին, օգտուելով արտասահմանցի մասնագէտներու աշխատութիւններէն, գրած է «Մագնիսականութիւն եւ ոգեհարցութիւն» գիրքը, որուն մէջ արծարծուած են ենթագիտակցութեան, ինքնաթելադրութեան, հոգեբուութեան, մագնիսականութեան, կամ քի ուժի, քնածութեան կամ մագնիսական քունի, յստակատեսութեան, մտածումներու փոխանցման, հեռակրութեան, ոգեհարցութեան եւ այլ հարցերու մասին:

1՝99 թուականին «Իգմիրեանց» գրական մրցանակի արժանացած է իր «Եւրոպիոյ հայոց գաւառաբարբառը» գործով: Գազանճեան հեղինակած է նաեւ Հայոց լեզուի դասագիրքեր, մայրենիի ընթերցարաններ, նաեւ՝ «Պատմութիւն հայ գրականութեան» գիրքը, որ լոյս տեսած է իր մահէն շատ տարիներ յետոյ:

Բեղուն եղած է անոր գրիչը մասնաւոր իրերէ լեզուաբան եւ գրած է նաեւ «Հայերենի փոխառեալ բառերի թրքերէնի մէջ» գիրքը, որ 1911 թուին Պոլսի լոյս տեսած է: Առհասարակ, անոր եղբորական մահէն ետք լոյս տեսած են արդի քերականութեան իր գիրքերը եւ տարածուած՝ սփիւռքի դպրոցներուն մէջ, նմանապէս «Ծիածան» խորագրով Քերական-ընթերցարան մայրենի լեզուի գիրքերն ալ բազմաթիւ հրատարակութիւններ ունեցած են:

Յովհաննէս Գազանճեան զոհուած է 1915-ին՝ 45 տարեկանին, Եւրոպիոյ մէջ:

Անոր կեանքն ու գործերը ուսումնասիրողները նկատած են, որ Գազանճեան ինքնաշխատութեամբ հասած է իր բարձունքին: Իբրեւ գիրք հեղինակին անտիպներուն մէջ կը մնայ ծաւալուն աշխատութիւն մը՝ «Եւրոպիացի հայ կինը» խորագրով:

«Եւրոպիացի հայ կինը» աշխատութիւնը հրատարակուած է «Արեւելեան Մամուլ»ին մէջ՝ 1903 եւ 1904 թուականներուն: Գազանճեան գրած է Եւրոպիացի կնոջ աղջկանութեան, հարսնութեան, մայրութեան, որբեւայրութեան, ֆիզիքական, իմացական եւ բարոյական նկարագրին, առտնին ընտանեկան կեանքին, կրօնքին եւ հաւատալիքին մասին:

Չմիւռնիոյ մէջ, Մատթէոս Մամուրեանի (1՝71-1901 թթ.) եւ Հրանդ Մամուրեանի (1901-1909 թթ., 1919-1922 թթ.) խմբագրութեամբ լոյս տեսած «Արեւելեան Մամուլ»ի թիւերէն զգալի մաս մը այսօր կը պահուի Հայաստանի Ազգային գրադարանէն ներս, իբրեւ անցեալի մամուլի փառաւոր էջերու վկայներէն: Արդէն խունացած այդ թերթերուն մէջ հասուած



ծաբար կը կարդանք Յովհաննէս Գազանճեանի «Եւրոպիացի հայ կինը» գործը: Ահա ինչպէս նկարագրած է Գազանճեան իր ծննդավայրի կինը, իբրեւ մայր (հրատարակուած է «Արեւելեան Մամուլ», 1903 թ., թիւ 44):

Եւրոպիացի հայ կնոջ համար մայրութիւնը, գաւակներ ունենալը, ամենէն ցանկալի երանութիւնն է որ գինք կը համակէ հպարտ գոհունակութեամբ մը: Ընդհակառակը ամուլութիւնը անդարմանելի դժբախտութիւն մըն է, որ ո՛չ մէկ վայելքով կրնայ փոխարինել: Ամուլ կիները բժշկական ամէն դեղ ու դարման ի գործ դնելէ գատ՝ ուխտատեղիներու, կարդացողներու եւ հմայիչներու ալ չեն մոռնար դիմելու, անոնց գորութիւնն ալ փորձելու համար, եւ ի գուր ամէն միջոց փորձելէ յետոյ՝ դարձեալ անկարելի կ'ըլլայ իրենց համակերպիլ ճակատագրական այդ վիճակին եւ մայրութեան նախածը կը տանջէ գիրենք մինչեւ վերջը: Ոմանք կը փորձեն ուրիշ կերպով գոհացնել մայրութեան պէտքը, ընկեցիկ նորածիններ որդեգրելով, զորս կը խնամեն ճշմարիտ մայրութեան մը բովանդակ գուրգուրանքովը, ու եթէ պատահի որ այդ որդեգիրն ալ կորսնցնելու դժբախտութիւն ունենան, զոհ տալով մահուան, ճշմարիտ մօր մը անմխիթար սուգովը կու լան անոր վրայ:

Սակայն մայրութեան բնագործ թէեւ իր բնական ուժգնութենէն բան մը կորսնցուցած չէ Եւրոպիացի կնոջ մէջ, ասոր հետ մէկտեղ ան բազմածին կիներէն ալ չէ եւ կը սոսկալ բազմաթիւ գաւակներ ունենային: Վիժու մի փորձերը անսովոր դէպքեր չեն իրենց մէջ եւ եղած են կիներ՝ որ զոհ գացած են այս կարգի փորձերու: Թէեւ մասնաւոր վիճակագրութիւն մը կատարելու պատենթութիւնը եւ միջոցները ունեցած չենք, բայց Եւրոպիացի հայ կինը միջին հաշուով 4-5 գաւակէն աւելի չի ծնանիր, որոնցմէ ապրողներու միջին թիւն ալ երեքէն աւելի ըլլալ չենք կարծեր [1]: Դիտելի է նաեւ, թէ աղքատիկ գործաւոր ու տգէտ դասակարգերու մէջ կիներն աւելի բազմածին են քան դիւրակեաց, հարուստ եւ բարեկիրթ դասակարգերու մէջ: Եւրոպիացի հայ կինը իր խորհելու մասնաւոր կերպն ունի այս խնդրոյն մէջ. «շատ տղան ես՝ փաշին կը վայլէ ես՝ բօշին», կ'ըսէ. այսինքն թէ մարդ կամ շատ հարուստ ըլլալու է որ կարող ըլլայ բազմաթիւ գաւակներ ըստ աժանուոյն խնամել եւ մեծցնել սպասուհիներու եւ ստնտուներու

միջոցաւ, առանց մօր բեռ ըլլալու, կամ շատ աղքատ եւ ստորին դասակարգէ, գուրկ նաեւ ամէն զգացումէ, ինչպէս են բօշաները, որոնց գաւակները շան լակոտներու պէս փողոցները իրենք իրենց կը մեծնան տիղմերու եւ փոշիներու մէջ տապալակելով, մինչ մայրը անդին իր գործին կը նայի անհոգ անտարբեր: Բազմածնութեան այս խորշանքը հարկաւ արդի քաղաքակրթութեան նախընծայ ձգտումներէն համարելու ենք: Մէկ կողմէն հետգհետէ շեշտուող անհատապաշտութիւնը եւ անձնական հանգիստ փնտռելու միտումը, միւս կողմէ կեանքի պայքարին հետզհետէ դժուարացող հանգամանքներուն մէջ բազմաթիւ գաւակներ ըստ արժանուոյն սնուցանելու, կրթելու եւ անոնց համար լաւագոյն վիճակներ ապահովելու դժուարութեան գիտակցութիւնը ստեղծած են միտքերու այս բանաւոր տրամադրութիւնը ընդդէմ բազմածնութեան:

Եւրոպիացի կնոջ համար յրութեան վիճակը գրեթէ բան մը չի փոխեր իր ապրելու սովորական կերպերուն մէջ: Իրաւ, ինչ ինչ զգուշութիւններ ի գործ կը դնեն, բայց երբեք բոլորովին անգործ եւ փափուկ կեանքի մը մեղկութիւններուն չեն յանձնել ինքզինքնին, այլ քիչ բացառութեամբ կրկին կը շարունակեն կատարել իրենց առտնին աշխատութիւնները: Դժուարին ծննդաբերութիւնները, սակայն, հոս ալ հետզհետէ ծայր տալ սկսած են: Այս տեսակ պարագաներու մէջ բժիշկին օգնութեան կը դիմուի, մինչդեռ սովորական ծննդաբերութիւնները տեղի կ'ունենան տեղացի մանկաբարձ կիներու միջոցաւ:

Տղաձգան այսինքն ծննդաբեր կանանց տկարութիւնը սովորական պարագաներու մէջ քանի մը օրէն աւելի չի տեւեր եւ ընդհանրապէս ծննդաբերութեան մէկ շաբաթ վերջը անոնք անկողնէն կ'ելլեն եւ իրենց սովորական վիճակը կը վերստանան: Նորածինը մէկ կամ երկու շաբաթ վերջը կը մկրտուի: Տղաձգան կինը ունի նաեւ քառսունք պահելու սովորութիւն մը, այսինքն՝ ժամանակ մը - որ կրնայ տեւել 15-էն մինչեւ 40 օր ըստ հաճոյս - պարտական է բնաւ տուէն դուրս չելլել: Իսկ քառսունքն էլլելու օրը - կիրակի առտու մը իր նորածինին հետ հագուած-չքուած եկեղեցի կ'երթայ, ուր պատարագ վերջ տանելէ քահանան մասնաւոր ընթերցումներ կը կատարէ նորածինին եւ իր մօր վրայ ու այսպէսով քառսունքը կը լմնայ:

Եւրոպիացի մայրը իր գաւակը անձամբ ինք կը դիւրեցնէ բացի այն պարագաներէն, ուր կաթ չ'ունենար: Քանի մը ամիս շարունակ ամէն օր տաք ջրով կը լոգցնէ իր նորածինը: Ընդհանրապէս խանդակաթ անձուիրութեամբ մը ամէն հոգածութիւն եւ գուրգուրանք կը նուիրէ անոր, բայց միեւնոյն ատեն երբ տղան իր լացերովը կամ անհանդարտութիւններովը իրեն շատ սրտնեղութիւն պատճառէ՝ սոսկալի կերպով կը դաժաննայ եւ անէծք չի թողուր կը տեղացնէ անուր զլխուն, ու եթէ տղան քիչ մը մեծ է՝ անէծքներուն երբեմն կը միացնէ նաեւ մէկ երկու կամ իմ կամ ձեռքի հարուած: Կան նոյն իսկ իրենց պզտիկները չարաչար ծեծող մայրեր. Եւրոպիացի մայրերու անէծքի սովորական բանաձեւերն են. «կրո՛ղ, կրողը տեսնէ երեսը, - գետինն անցնիս, - անկճիղ տակէն չանես, [2] - գետինն տկէն գայ ձայնըդ, - հողերը դնեմ քեզի, - աչիցդ լուսը

քէօրնայ, եւ այլն, եւ այլն: Գրեթէ անկարելի է եւրոպիացի մայրերը ետ կեցնել իրենց գաւակները անիծելու այս յոռի ունակութենէն: Այս պարագային մէջ իրենց առաջին եւ վերջին չքմեղանքը կը կայանայ «մօրը անէծքը չի բռներ» ժողովրդական առածը առաջ քշելուն մէջ, ամէն անգամ որ այդ ունակութեան տգեղութիւնը եւ տղուն դաստիարակութեան վրայ ունենալիք գէշ ազդեցութիւնը իրենց հասկցնելու գտնէ:

Եւրոպիացի մայրը ինչպէս չափազանց է մանկան դէմ իր սրտնեղութիւնը յայտնելու կերպերուն՝ նմանապէս չափազանց է անոր նկատմամբ իր գորովի ու սիրոյ ցոյցերուն: Ան իր զգացումներուն արտայայտութեանը մէջ չի կրնար պահել բանաւոր չափաւորութիւն մը, եւ հակասական ծայրացեղութիւններու մէջ կը տարուբերի շատ անգամ, այնպէս որ կը նային թէ այս վայրկեանին սոսկալի կերպով կ'անիծէ, կը նախատէ, կը ծեծէ իր տղան, յաջորդ վայրկեանին գանի որողելու համար փաղաքշանքի ու համբույրներու տարափով մը, պատրաստ գոհացնելու նաեւ անոր ամէն քմահաճոյքները: Այս ընթացքը տղաքը կ'ընէ խեռ ու միանգամայն շփացած: Այս իսկ է պատճառը որ Եւրոպիացի մայրերը իրենց պզտիկներուն վրայ բարոյական ազդեցութիւն չունին գրեթէ:

Եւրոպիացի մայրը իր փոքրիկները սիրելու ատեն ունի իր մասնաւոր փաղաքշական բառերու հոյլը - զոր օրինակ՝ «Ձագուկս, եսվրուս, գուգիս, հոգիս, ճիկէրս, ճանս, անուշիկս» եւ այլն - զոր յորդառատ կը յեղեղէ: Անոնց հետ խօսակցելու ատեն կը գործածէ մասնաւոր մանկական բարբառ մը, զոր օրինակ՝ «կական կորձ արէ» = պտուղը (տանձ կամ խնձոր եւ այլն խած կամ կեր եւ այլն) [3]: Գիտէ նաեւ օրօրերգներ եւ ուրիշ մանկական երգեր, որոնցմով կ'օրօրէ եւ կը քնացնէ իր պզտիկը կամ կը խաղցնէ գանի արթնութեան ատեն. սակայն բաղդատմամբ ուրիշ գաւառներու՝ Եւրոպիացի մայրերու գիտցած այս կարգի ժողովրդական երգերու թիւը շատ քիչ է եւ գիտցուածներն ալ հատկապէս բաներ են, այնպէս որ հակառակ փափաքիս՝ չկրցի այս տեսակ ամբողջական երգ մը քաղել, գայն հոս նոյնութեամբ մէջբերելու համար:

Պզտիկները քանի մեծնան՝ անոնց պատճառած նեղութիւնները կամ ցաւերն ալ այնքան կ'աւելնան. «մեծցաւ, մենծ ցաւ» կ'ըսէ Եւրոպիացի մայրը, բառախաղով մը ակնարկելով այս պարագան: Ասոր հետ մէկտեղ անոր սէրը իր գաւակներուն վրայ երբեք չի պաղիր. ան մինչեւ վերջը հոգի կու տայ անոնց վրայ, եւ ամէն նեղութիւն յօժարութեամբ յանձն կ'առնէ անոնց համար, ո՛ր տարիքի կամ վիճակի մէջ ալ գտնուին: Իր անձնուիրութիւնը, անոնց համար ըրած գոհողութիւնները, անոնց դժբախտութեան օրերուն մէջ իր կատարած դերը շատ անգամ դիւցազնական համեմատութիւններ կ'առնեն: Վերջապէս Եւրոպիացի մայրերն ալ ընդհանրապէս կը կրեն այն ազնիւ սիրտը, զոր կը կրեն բոլոր երկիրներու ճշմարիտ մայրերը: Պէտք է ճշդել սակայն, թէ Եւրոպիացի կնոջ մայրական սէրը աւելի բնագրի վրայ հիմնուած է քան դատողութեան: Ան այս տեսակ բնագրական կոչը սիրով մը իր գաւակներուն



# Մեծագոյն Ձեռագիր Մատենանի Յարիւրամեայ Յաղթական Երթը Մշոյ ճառընտիրը Յայերէն Ծանրագոյն Մատենանը Վկայ Յայ Մշակոյթի Վերականգնումին

ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ.  
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

### Մուտք

Ուղիղ հարիւր տարի առաջ 1917 թուին համաշխարհային Ա Պատերազմի արհաւիրքներէն փրկուած հայերէն բազմահազար ձեռագիրներուն մէջ ամենա- մեծն ու ամենէն թանկարժէք մագաղաթեայ ձեռագիրը ՄՇՈՅ ՃԱՌԼՆՏԻՐՆ է, որ 1917 թուի գաղթի ժամանակ Մշոյ Առաքելոց Վանքէն փախստելով Թիֆլիս կը բերուի ու կը յանձնուի Հայ Ազգագրական Ընկերութեան: Այդ հսկայ Մատենան ունի սակայն իր ողիսականը, որուն միայն կէսն էր որ հասաւ Թիֆլիս, եւ երկու տարի ետքն ալ միւս կէսը հրաշքով փրկուելով վերամիացաւ իր հարազատին՝ վերականգնելով հայ մշակոյթի այդ անգոտանելի կոթողը իր ամբողջութեանը մէջ: Այսօր, Մեսրոպ Մաշտոցի անուան երեւանի Մատենադարանին մէջ Մատենան ի պահ կը մնայ 7721 համարին ներքեւ՝ ամենափոքր ձեռագիրը գրկած:

### Մատենանը

Մշոյ ճառընտիրը կը կշռէ 28 քիլոկրամ, մագաղաթեայ թերթերու 70X55 ս.մ. չափով: Սկիզբէն կը բաղկանար 660 մագաղաթեայ ընդարձակ թերթերէ, եւ սակայն այժմ ունի 601 թերթ: Իսկ մնացեալներէն 17 թերթ կը մնայ վենետիկի եւ մէկ թերթ ալ Վիեննայի Միսիթարեանց Միաբանութեան մօտ: Աւելի ուշ, 1977-ին, Երեւանի Մատենադարանը Մոսկուայի Լենինի անուան գրադարանէն ստացած է երկու թերթ որոնք անջատուեր էին Մատենանէն: Իւրաքանչիւր թերթ հորթի մը կաշի է, եւ այդ հաշուով

ամբողջ ձեռագրին համար ըստ գիտնականներու հարկաւոր եղած է 607 հորթի մորթ գործածել:

Մշոյ ճառընտիրը, գրուած հին հայկական երկաթագիրով, ունի բովանդակալից Յիշատակարան մը ուր գրիչին անունը, թուականն ու վայրը նշուած են: Վարդան Կարնեցի գրիչն է այս հսկայ Մատենանին որ երեք տարի աշխատած է անոր վրայ եւ վերջացուցած 1202 թուականին՝ մեզմէ 815 տարիներ առաջ, Երզնկայի Աւագ Վանքին մէջ, եւ հոն լուսանցքներու զարդերը գծուած Ստեփանոս ծաղկողէ՝ Բաբերդի տանուտէր Աստուածատուրի պատուէրով: Ձեռագիր Մատենանը ճառերու, վարքերու եւ վկայաբանութեանց հաւաքածոյ մըն է, դասաւորուած ըստ տարուան տօներուն, որուն համար ալ ան կոչուած է նաեւ «Տօնական»:

### Ձեռագրին Ողիսականը

1204 թուականին Մատենան կը յափշտակուի Բաբերդի թուրք դատաւորին կողմէ եւ Խլաթի մէջ կը մնայ եւ ապա կը վաճառուի Մշոյ Առաքելոց Վանքին չորս հազար (4,000) արծաթէ դրամով՝ շրջանի հայ բնակիչներուն եւ միաբաններուն միջոցներով, եւ ապահով Առաքելոց Վանքին մէջ ի պահ մնացած մինչեւ 1917 թուականը: Ձեռագրի յետագայի երկրորդական Յիշատակարանն է կը հասկցուի որ գիրքը գերի տարուած է եւ մեծ վճարումով գալն ազատած են գերութենէ եւ աւելի քան 700 տարի պահուած է Առաքելոց Վանքին մէջ:

Համաշխարհային Ա Պատերազմի օրերուն յանկարծ նկատի առած են Մատենանին բացակայութիւնը իր հարազատ Վանքէն, եւ վանականներ



անվերադարձ կորուստ մը նկատած են թանկարժէք այդ ձեռագիրը: Սակայն շուտով քաջարի հայ կին գաղթականներու միջամատուցիւնը փարատած է խաւարը եւ ի լոյս բերած մեծահամբաւ ՃԱՌԼՆՏԻՐԸ:

### Երկու Գաղթական Յայ Կիներ

1917 թուի գաղթի օրերուն, երկու գաղթական կիներ կը գիշերեն Առաքելոց Վանքի կից խուցերէն մէկուն մէջ, եւ առաւօտեան կը նկատեն վանքի ներսիդին ինկած հսկայ ձեռագիր գիրք մը եւ կ'որոշեն փրկել գալն: Գիրքը շատ ծանր ըլլալուն երկուքի կը բաժնեն գալն, մին իրենց հետ տանելով, եւ միւսը խնամքով փաթթելով իրենց վերարկուներէն մէկուն մէջ, փոխադրել կուտան էրզրումի մայր եկեղեցին, որուն բակին մէջ ալ կը թաղեն գալն: Առաջին կէսը կիները Թիֆլիս կը հասցնեն ու կը յանձնեն Հայ Ազգագրական Ընկերութեան՝

միշտ ի մտի ունենալով հարազատ կիսուն «գերեզման»ը ուրկէ յարութիւն առնելով երկու տարի ետք, 1919-ին, Պաքուի մէջ պաշտօնավարող ԼէՏ սպայ մը Հայ Բարեգործական Ընկերութեան կը ծախէ անյայտ եւ անծանօթ հսկայական ձեռագիր մը որ կը հաստատուի իբրեւ հարազատ եղբայրը Մշոյ ճառընտիրին: Էրզրումի եկեղեցիէն Պաքու, հրաշքով ազատած հոգեհարազատը պիտի միանար իր երկուորեակին:

### Ճառընտիրը Յաղթական

Այսօր, հարիւր տարի ետք, հայ ժողովուրդի մտաւոր զարգացման մեծագոյն յուշարձաններէն մին, ենթարկուելէ ետք թուրքերու հալածանքին ու կոտորածին, հրաշքով եւ հայ երկու կիներու քաջարի ջանքերով կը փրկուի առ յաւետ՝ ի պաճանս հայ ազգին եւ Հայ Առաքելական Մայր Եկեղեցիին:

**St. Gregory Armenian Church**  
 Սր. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցի  
 Fellowship Auxiliary Committee Presents  
**ONE-DAY BUS TRIP TO**  
 Մեկ Օրուայ Պատյոս  
**Newport Beach-Laguna Beach-Dana Point**  
**Mission San Juan Capistrano**

Wednesday, July 24, 2019  
 Bus Will Leave at 9am  
 Return Around 7pm  
 Special Lunch Buffet in  
**EL TORITO Restaurant**  
 at the Dana Point Harbor

**For Reservations, Please call**  
 Vahe ... 562-715-8730 Alice ... 818-606-6606  
 Khris ... 626-202-2704 Vera (Church Office) ... 626-449-1523

**Donation... \$75**

**VA Print Media**

Book Printing & Binding • Hard Covers  
 College Dissertations • Year Books  
 Restoration of Old Books & Bibles  
 Newspaper Archiving

**Vahe Atchabahian**  
 1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
 Tel: 626-793-6220  
 Cell: 626-354-5924  
 vamedia@yahoo.com  
 www.vaprintmedia.com

### «Եւդոկիացի Հայ Կինը»

Շարունակուած էջ 16-էն

փարած՝ զանոնք չափահասութեան հասցնելէ վերջն ալ չի կրնար հանդուրժել որ անոնցմէ մին իսկ իր քովէն հեռանայ: Ասոր համար է որ իր աղջիկները կը դժուարի օտար քաղաքներ հարս տալ, նոյն իսկ մերժելով երբեմն ամուսնութեան նախանձելի առաջարկներ, եւ ասով իր աղջկան բախտը կապելով: Միւս կողմէ իր մանչ գաւակներն ալ չ'ուզեր օտար քաղաք ներդրել ուսում առնելու կամ գործի համար: Բազմաթիւ մայրեր այսպէսով մայրական կոյր սիրոյ զոհ տուած են իրենց գաւակներուն յուսալից պայագան:

Եթէ խնդիր ըլլայ քննել թէ եւդոկիացի մօր սէրը աղջիկ գաւակներու վրայ աւելի կ'ըլլայ թէ մանչերու, թերեւս սա չափը միայն կրնայ հատատուիլ, թէ այդ սէրը շատ անգամ աւելի տեւական հանգամանք մը ունի աղջիկներու նկատմամբ քան թէ մանչերու, քանզի մանչը չափահասութենէն վերջ տնէն դուրս գործի կեանքը ընդգրկելով եւ մօրը հանդէպ աւելի անկախ դիրք մը բռնելով, երբեմն ալ իր ամուսնութեամբը ընտանեկան կարգ մը անհամաձայնութեանց պատճառներ ստեղծելով տան մէջ, կարծես թէ հետզհետէ կը կորսնցնէ սրտի մօտիկ հանգամանքը իր մօր քով, մինչ աղջկան համար այդ պատճառները գոյութիւն չունին եւ հարս ըլլալէ վերջ ալ ան կը շարունակէ մնալ իր մօր հլու հպատակ սիրելին: Ստոյգ է որ ամէն տեղ ալ մայրերը իրենց աղջիկներու սրտակից մտերիմներն են միանգամայն, մինչդեռ մանչերուն՝ մայրերը միայն: Այս հանգամանքէն օգտուելով է որ բարոյապէս ինկած մայրեր շատ անգամ իրենց աղջիկները կը քաշեն կը տանին իրենց ետեւէն այն ճախճախուտներուն մէջ, ուր արդէն իրենք կը գտնուին եւ դժբախտաբար Եւդոկիոյ մէջ ալ կան այդ տիպարներէն մայրեր՝ որ իրենց աղջիկները անբարոյականութեան առաջնորդած են:

Այս բացառիկ անբարոյա-

կան մայրերէ զատ՝ կան նաեւ որդիատեաց մայրերու սակաւաթիւ տիպարներ ալ: Պատահած չէ որ մայր մը իր գաւակը ատէ անոր տղայութեան ատեն, բայց երբ գաւակը չափահաս կ'ըլլայ, կրնան իրենց մէջ ծագիլ ինչ ինչ խնդիրներ, որոնք տեղի տան որդիատեաց հակակրութեան մը, որ կրնայ հետզհետէ ատելութեան եւ թշնամութեան փոխուիլ, եթէ մայրը բնական յոռի նկարագիր մըն է որ կը կրէ: Ընդհանրապէս այս տեսակ ատելութեանց տեղի տուող պատճառները նիւթական խնդիրներ են - զոր օրինակ՝ ժառանգական վէճ մը - որ հետզհետէ արծարծելով մայր եւ որդի իրարու դէմ կը գրգռէ եւ կու գայ ատեն մը, որ մօր սրտին մէջէն մայրական գորովի ամէն զգացում արմատէն կը քանդուի եւ ա'լ հոն անօրինակ ու կատաղի ատելութիւն մըն է, որ կ'եռայ ընդդէմ գաւակին: Շատ տարօրինակ է որ ամենէն անարգ ու յոռի վարք ու բարքի տէր, նոյն իսկ իրենց մայրերը չարաչար ծեծող գաւակներ գտնուած են եւ դադրած չեն իրենց մօր գորովը վայելելէ, մինչդեռ շահամոլութեան կիրքը - կ'երեւի աւելի գորաւոր քան մայրական սիրոյ բնագրը - շատ անգամ կարող կ'ըլլայ սպաննել մայրական սէրը եւ մայրը հանել գաւակին դէմ:

Պէտք է մոռնալ յիշել եւդոկիացի խորթ մօր տիպարը, որ մասնաւոր ուշադրաւ հանգամանք մը չունի եւ կը նմանի ամէն երկիրներու խորթ մօր, որ անպատճառ իր հարազատ եւ խորթ գաւակներուն մէջ խտիր կը դնէ, որ գէշ աչքով կը նայի խորթերուն վրայ ու պէտք եղած խնամքը չի տանիր անոնց, որ նոյն իսկ զանոնք կը ծեծէ ալ: Ասոր հետ մէկտեղ տեսնուած են խորթ մօր ազնուագոյն տիպարներ ալ:

Եւդոկիացի մայրը նորօրինակ գորովագութ հանգամանք մը կը ստանայ երբ թոռներու տէր կ'ըլլայ եւ կը դառնայ մեծ մայր կամ մամ: Արդէն ամենէն ցանկալի փափաք մըն է իրեն համար գաւակները ամուսնացնելը. մայր մը որ մանչը չկար-

### Երեք Նախագահների Ծգնածամ

Շարունակուած էջ 2-էն

մի պատճառը: Ի վերջոյ, Հայաստանում երբեք չի եղել «անձի Սահմանադրութիւն»: Եղել է «համակարգի Սահմանադրութիւն»: Այդ համակարգը ներկայումս իշխանութեան կարգավիճակում է: Բայց պահպանուած է այդ համակարգի «Սահմանադրութիւնը»: Ամբողջ խնդիրն այն է, որ Սահմանադրութիւնը փոխելը ինքնին չի բերի քառորդ դար ձգուող ճգնաժամի հանգուցալուծման, որովհետեւ բուն ճգնաժամը հանրային ու վերնախաւային պատկերացումների եւ արժէքների, դրանց ներդաշնակեցման տիրոջ թում է: Ըստ այդմ, ճգնաժամի յաղթահարումը այդտեղ է, որը կ'արտացոլուի արդէն նոր՝ հանրային լայն կամք արտայայտող Սահմանադրութեամբ:

Գործնականում, Հայաստանի

առաջընթացին խանգարում է ոչ թէ այն Սահմանադրութիւնը, որ նախկին համակարգից մնացել է առ այսօր, այլ հանրային եւ վերնախաւային պատկերացումների, արժէքների, հասարակական-քաղաքական կեանքի ստանդարտների շուրջ մօտեցումների ներդաշնակեցման գործընթացի բացակայութիւնը:

Սահմանադրութիւնը կարող է լինել հետեւանք կամ արդիւնք: Հին Սահմանադրութիւնը իր փոփոխութիւններով հանդերձ հետեւանք էր: Նորը պէտք է լինի արդիւնք, մեզ նոր հետեւանք պէտք է: Հարցն այն է, թէ ինչի՞ արդիւնք: Դա է, որ դեռեւս չունի շօշափելի պատասխան: Յեղափոխութիւնն ինքնին դեռեւս պատասխան չէ, մի շարք պատճառներով:

«ԼՐԱԳԻՐ»

գած կամ աղջիկը հարս չըրած կը մեռնի՝ «աչքը բաց» կ'երթայ, իրենց բացատրութեամբը: Զանոնք ամուսնացնելէ վերջ ալ թոռներ տեսնելու բուն ցանկութիւնը կ'արթննայ իր մէջ, եւ երբ այս ցանկութիւնն ալ գոհացում կը գտնէ՝ ա'լ իր ուրախութիւնը չափ չունի: Ան գորովի մարմնացումն է իր թոռներուն համար, զորս խանդակաթօրէն կը սիրէ եւ կը պաշտպանէ իր թեւերուն տակ մօրը կամ հօրը խստութիւններուն դէմ: Ան մշտարթուն հսկողն է՝ իր թոռներուն օրօրոցին եւ անկողինին վերեւ, անոնց ցաւին ցաւակիցը եւ հիւանդութիւններուն սփոփիչը, զի գիտէ նաեւ ի հարկին ի գործ դնել առտնին տարրական բժշկութիւն մը՝ մասնաւոր տնական դեղերով կամ այլ դարմանական միջոցներով: Վերջապէս ան իր թոռնիկներուն նուէրներ բաշխող, անուշ հէքեաթներ պատմող, յաւէտ բարի, յաւէտ ներող մամն է, որուն բերնէն երբեք խիստ խօսք մը չ'ելլեր թոռնիկին դէմ ինչքան ալ չարութիւններ գործէ ան: Կան բազմաթիւ մամեր որ իրենց թոռները անձամբ իրենք կը խնամեն գրեթէ կատարելով մայրութեան բոլոր պարտականութիւնները: «Թոռը գաւակէն աւե-

լի անուշ կըլլայ», կ'ըսէն մեր մամիկները: Ստուգիւ շատ սքանչելի է մամերու այս անձնութիւնը:

[1] Այս ըլլալու է պատճառը որ Եւդոկիոյ հայ բնակչութեան թիւը զգալի աճում մը ցոյց տուած չունի, զի ժողովուրդ մը աճելու համար անպատճառ ծնունդներու միջին թիւը 4-5 էն աւելի ըլլալու է: (Տե՛ս Dr Daniel G. Brinton-ի «Ժողովրդոց հիւանդութիւնները թարգմ. Վարսամ, «Արեւելեան Մամուլ» թիւ 39, էջ 919):

[2] Այս անէժքը կ'ակնարկէ անցեալ դարերու մէջ տեղի ունեցած եւ «մենծ մահ» անունով ժողովրդեան մէջ յիշատակը պահուած ժանտախտի ահուելի համաճարակի մը մասնաւոր ախտանշանը-ականջին տակը գոյացող մահացու այտուցք մը:

[3] «Եւդոկիոյ հայոց գաւառաբարբառը» անունով հրատարակած ուսումնասիրութեանս բառացուցակի մասին մէջ դրած եմ նաեւ Եւդոկիոյ բարբառին մանկական բառերն ալ: Մանօթ լեզուաբան Պր. Հրաչեայ Աճառեան «Հայ մանկական բարբառի մասին» առջի տարին հրատարակեց կարի շահեկան ուսումնասիրութիւն մը:

«ԺԱՄԱՆԱԿ»/Պոլիս

# INNOVATIVE

## Designs Manufacturing, Inc.

idmifurnishings.com

ՄԱՐԱԶԴ



ԿԻՒԼԷՆ ԳՈՒԶՈՒԵԱՆ  
Ծնեալ Դամասկոս Ապրիլ 15, 1937

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին՝ ԿԻՒԼԷՆ ԳՈՒԶՈՒԵԱՆ-ի մահը որ պատահեցաւ Յունիս 15, 2019ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, Յունիս 22, 2019ին, Կ.Ե. Ժամը 3:00ին, Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան Church of the Hills մատրան մէջ, ապա թաղումը՝ նոյն գերեզմանատան մէջ:

- Սգակիրները՝
- Ջաւահիրները՝
- Օրդ. Հուրիկ Գուզուեան
- Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սիրլա Մարլեան եւ զաւակները՝ Անթուան եւ Մայքըլ
- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Նայիրի Գուզուեան եւ զաւակները՝ Գրիգոր, Տարօն եւ Ալին
- Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Սեդա Խոտանեան եւ զաւակը՝ Նարեկ Քոչըր՝ Տէր եւ Տիկ. Էլիսա եւ Անահիտ Լապատ եւ զաւակունք (Դամասկոս)
- Եղբայրները՝
- Տէր եւ Տիկ. Ներսէս եւ Արաքսի Ղազարեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկ. Կարպիս եւ Սվեդլանա Ղազարեան եւ զաւակունք (Դամասկոս)
- Ազգականները՝
- Տիկ. Ալիս Յարութիւնեան եւ զաւակունք
- Տիկ. Մարիթան Գուզուեան եւ զաւակունք
- Տիկ. Ժօզէֆին Այն Մալքը եւ զաւակունք (Լիբանան)
- Տիկ. Մարի Գուզուեան եւ զաւակունք (Հայկէս)
- Եւ համայն Գուզուեան, Ղազարեան, Մարլեան, Խոտանեան եւ Մուրատեան ընտանիքներն ու հարազատները:

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել AEBU Scholarship Fund-ին 1060 N. Allen Ave., Pasadena, California

Անթոյլատրելի Դանդաղկոտութիւն

Շարունակուած էջ 2-էն

բերանի խոռոչում, լեարդի հետ կապուած խնդիրներ»: Նկատենք, որ այս ընթացքում բազմաթիւ քաղաքացիներ հասցրել են լողալ Սեւանայ լճում, թրջել ոտքերը, շատ երեխաներ են լճափում գուարձացել, ու չի բացառուում նաեւ՝ ջուր կուլ տուած լինեն: Նախարարութիւնը, սակայն, ուշացած յայտարարում է, «Արգելել երեխաներին լողալ չթոյլատրուած վայրերում»:

Ինչպէ՞ս կարելի է ամիսներ շարունակ անտարբերութեան մատնել այսքան կարեւոր հարցը ու մասնագիտական խորհուրդներ չտալ հայ հասարակութեանը: Նախորդ տարի նախարար Արսէն Թորոսեանը վարտիքով ջուրը մտաւ՝ ապացուցելով, որ թունաւոր չէ, այս տարի ինչո՞ւ նոյնքան օպերատիւ կերպով չչափ տարարեց. «Ժողովուրդ, Սեւանայ լիճ մի՛ մտէք. վտանգաւոր է»: Կարծում ենք՝ բարեխղճութեան հարց է: Իսկ ինչ վերաբերում է Մնդի տեսչութեանը, ապա նրանք եւս պէտք է օր առաջ փորձաքննութեան ենթարկեն ձկնատեսակները եւ յայտարարեն՝ Սեւանի ձուկը թունաւոր է, թէ ոչ: Սպասելու ժամանակ չունենք:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Ոչ եւս է Արսէն Անասեան

Յաւով իմացանք աւստրալահայ գաղութի ծանօթ անձնաւորութիւններէն եւ Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան մատենադարանի նախկին գիտաշխատողներէն Արսէն Անասեանի մահը, յետ երկարատեւ հիւանդութեան:

Այս տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար իր եղբօր ծանօթ երաժիշտ եւ խմբավար ու մեր թերթին աշխատակից Տէր եւ Տիկ. Հենրիկ եւ Մարիթա Անասեանին:

ՑԱՒԱՑԱԿԱՆ

Արսէն Անասեանի մահուան (մահացած Աւստրալիա) տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու աշխատակազմը իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար իր եղբօր ծանօթ երաժիշտ եւ խմբավար ու մեր թերթին աշխատակից Տէր եւ Տիկ. Հենրիկ եւ Մարիթա Անասեանին:

ՑԱՒԱՑԱԿԱՆ

Մարի Մանկրեանի մահուան առիթով Ս.Դ.Հ.Կ.Ի «Փարամագ» մասնաճիւղի վարչութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Սալբի Մանկրեաններուն:

Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

Եղբօր Ընտանիքը Մեկնում է Աւստրալիա

Շարունակուած էջ 15-էն

Միայն մէկ շաբաթ կրնամ ձեզի հոս պահել, վերջէն ձեր գլխուն ճարը դուք պիտի տեսնաք: Վաղը սրբազանը պիտի գայ, թէրեւս ան կրնայ խորհուրդ մը տալ, ասում է տիկին Մարին:

Յաջորդ օրը, ընթրիքի ընթացքին սրբազանը խօսք է ասում.

- Ես, իսկապէս զարմացած եմ. Ի՞նչպէս արտօնած են նշանաւոր պատմաբանի մը զաւակին դուրս ելլել երկրէն: Ի՞նչ պիտի ընես հոս, մանաւանդ որ լեզուն ալ չես գիտէր: Խորհուրդ կու տամ ետ երթալ:

դիմում է Արսէնը տանտիրկնոջը: - Որո՞ւ պիտի հեռաձայնես, դուն մէկը չունիս հոս:

- Ծանօթ բարեկամի մը, Ադելաիդ:

- Այո՞, այո, կրնաս, ասում է տիկին Մարին՝ յուսալով, որ մերոնցից ազատուելու ուղի է յայտնուել:

- Գնացք նստէք եւ եկէք Ադելաիդ, ես ձեզ կ'օգնեմ, ասել էր ուսու ծանօթը:

Պարզում է, որ նա մի խոշոր հեռաձայնային ընկերութեան տնօրէն է եղել: Մերոնց դիմաւորել է հենց կառավարողը եւ տարել իր բնակարանը:

Առաւօտեան տիկին Մարին նոյն յանկերգով հարամ է ասում նախաձայր՝ անընդհատ իրեն մեղադրելով, որ տարիներ առաջ ոգեւորել է Արսէնին՝ դուրս գալ երկրից ու նոր, կապիտալիստական երկրում դոյարներ շինել:

Շաբաթն աւարտուելուն պէս տիկին Մարին հրամայում է.

- Վաղը առտու դուրս պիտի ելլաք այս տունէն եւ կամ պիտի համաձայնիք ետ վերադառնալ:

- Երկու շաբաթ ձեզ արձակուրդ: Վստահ եմ՝ շատ հոգնած կը լինէք: Հանգստացէք, ման եկէք քաղաքում, կերեք, խմեք, էս մեր սիրուն աղջկան էլ լաւ ման տուէք, յետոյ, Արսէն ջան, կը տեսնես թէ ինչ ենք անելու:

Անելանելի իրադրութեան մէջ, յանկարծ Արսէնը մտաբերում է Երեւանի Արմենիա հիւրանոցում տարիներ առաջ մտերմացած ազգութեամբ ուսու գործարար Վիկտորին, որն ապրում է Աւստրալիա՝ հարաւում գտնուող Ադելաիդ ծովափնեայ քաղաքում: Վերջինս եղբօրս տուել էր իր տան հասցէն եւ հեռախօսի համարը ու ասել. «Երբ իմ կարիքն ունենաս, զանգահարիր, ես քեզ կեւ օգնեմ»:

- Կրնա՞մ հեռաձայն մը ընել, -

Եւ այսպէս, Արսէնի ընտանիքը վերջնականապէս հաստատուեց Ադելաիդում: Աղջիկն այսօր երեք զաւակների տէր է, որոնց հայրը, դժբախտաբար օտար է: Ընդհանրապէս Ադելաիդում ընդամենը մի քանի հայ ընտանիք կայ, որոնք գրեթէ կապ էլ չունեն միմեանց հետ: 2010-ին եղբայրս կորցրեց իր յիսուն տարուայ կեսնի ընկերոջը եւ այդ օրուանից իր առողջութիւնն էլ գնալով վատացաւ ու բոլորովին վերջերս, Յունիսի 1-ին հոգին աւանդեց:

Մէկ ուրիշ առիթով կը պատմեմ Արսէնի՝ այդ հեզ, ազնուաբարոյ մտաւորականի, հիանալի երգչի մասին:

NATIONAL NOTARY ASSOCIATION NOTARY PUBLIC MEMBER

**Garine Depoyan**

626-755-4773

554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106

ghdepyan@gmail.com

**Legacy Realty**

**Nick Karasarkisian**  
Broker - CalBRE # 01022153

2275 Huntington Dr., #117  
San Marino, CA 91108  
Phone: **213.706.9990**

e-mail: nickkarasarkisian@gmail.com  
www.legacyrealtyca.com

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Ուիմբլդոնի Պատմութեան Ամենաերկար Եզրափակիչում Ջոկովիչը Յաղթեց Ֆեդերերին

Աշխարհի առաջին ռակետ, 32-ամյա սերբ Նովակ Ջոկովիչը 5-րդ անգամ նուաճեց Ուիմբլդոնի մրցաշարի չեմպիոնի կոչումը: Եզրափակիչում Ջոկովիչը մրցեց աշխարհի երրորդ ռակետ, Ուիմբլդոնի 8-ակի չեմպիոն, 37-ամյա Ռոջեր Ֆեդերերի հետ եւ առաւելութեան հասաւ 7:6 (7:5), 1:6, 7:6 (7:4), 4:6, 13:12 (7:3) հաշուով:



Պաշարը տեւեց 4 ժամ 55 րոպէ, ինչը մենախաղի եզրափակիչի տեւողութեան ռեկորդ է Ուիմբլդոնի պատմութեան մեջ:

Ջոկովիչը Ուիմբլդոնում յաղթել է նաեւ 2011, 2014, 2015, 2018 թուականներին եւ պաշտպանեց տիտղոսը:

## Սիմոնա Հալեպը 55 Րոպէում Յաղթեց Սերենա Ուիլյամսին

Ռումինացի Սիմոնա Հալեպն առաջին անգամ նուաճեց Ուիմբլդոնի չեմպիոնի կոչումը՝ կանանց մենախաղի եզրափակիչում 55 րոպէում առաւելութեան հասնելով Ուիմբլդոնի 7-ակի չեմպիոն, ամերիկացի Սերենա Ուիլյամսին նկատմամբ՝ 6:2, 6:2:



2018թ. Ֆրանսիայի բաց առաջնութեան յաղթող Հալեպն առաջին անգամ խաղաց Ուիմբլդոնի մրցաշարի եզրափակիչում:

## «Բարսելոնան» Հաստատեց Գրիզմանի Տրանսֆերը

Սպանիայի ախոյեան «Բարսելոնան» եւ սպանական Լա Լիգան հաստատեցին աշխարհի ախոյեան Ֆրանսայի հաւաքականի յարձակուող Անտուան Գրիզմանի տրանսֆերը Մադրիդի «Ատլետիկոյից» կատարուական ակումբը, որը 28-ամեայ խաղացողի համար վճարեց 120 միլիոն եւրո: Կողմերը կը կնքեն 5 տարուայ պայմանագիր, նոր տրանսֆերային գին կը սահմանուի 800 միլիոն եւրո:



Գրիզմանը «Ատլետիկոյից» հեռանալու որոշման մասին յայտարարել էր Մայիսին: Նա մադրիդեան ակումբում հանդէս էր գալիս 2014թ. Յուլիսից: Պայմանագիրը նախատեսուած էր մինչեւ 2023 թուականը:

Անցած մրցաշրջանում նա մասնակցել է 48 հանդիպման, խփել 21 կոլ: Գրիզմանը չէր միացել «Ատլետիկոյի» մարզումային հաւաքին, ինչի համար կը տուգանուի 200 հազար եւրոյով:

## Բուֆոնը Մերժել է «Մանչեսթեր Սիթիին» եւ «Մանչեսթեր Յունայթեդին»

Լեգենդար իտալացի դարպասապահ Ջանլուիջի Բուֆոնը մինչեւ թուրինի «Եուվենտուս» վերադառնալն առաջարկներ է ունեցել «Մանչեսթեր Սիթիից» եւ «Մանչեսթեր Եունայթեդից», սակայն մերժել է դրանք, հաղորդում է Daily Mail-ը: Այդ առաջարկներն ֆինանսապէս աւելի շահաւէտ են եղել, սակայն Բուֆոնը մեկնարկային կազմում յայտնուելու շանս չէր ունենայ այդ թիմերում:



«Եուվենտուսում» իտալիայի հաւաքականի նախկին դարպասապահը մէկ մրցաշրջանի համար կը ստանայ 1,5 միլիոն եւրո: Անցած մրցաշրջանում 41-ամեայ խաղացողը ֆրանսական ՊՍԺ-ում ստանում էր 8 միլիոն եւրո:

Բուֆոնը «Եուվենտուսում» հանդէս է եկել նաեւ 2001-2018 թուականներին՝ անցկացնելով 656 հանդիպում, բաց թողնելով 518 կոլ:

## Եւրո-2019. Հայաստանն Առաջին Խաղում Պարտուեց Սպանիային



Ֆուտպոլի Եւրոպայի մինչեւ 19 տարեկանների առաջնութեան Ա խմբի առաջին խաղում Հայաստանի հաւաքականը Հանրապետական մարզադաշտում մրցելով Սպանիայի հետ պարտուեց 1:4 հաշուով:

Հանդիպմանը մարզադաշտից հետեւում էին 10200 երկրպագու: Ա խմբի երկրորդ տուրում Հայաստանի հաւաքականը Յուլիսի 17-ին կը խաղայ Իտալիայի հետ (Հանրապետական մարզադաշտ, ժամը 21:00-ին), իսկ Պորտուգալիան ուժերը կը չափի Սպանիայի հետ (Բանանց մարզադաշտում):

## Պորտուգալիան Յաղթեց Իտալիային



Երեւանում ընթացող ֆուտպոլի Եւրոպայի մինչեւ 19 տարեկանների առաջնութեան Ա խմբի առաջին տուրում մրցեցին մրցաշարի ֆաւորիտներից երկուսը՝ Իտալիան եւ Պորտուգալիան:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ «Բանանց» մարզադաշտում կայացած խաղում Պորտուգալիան «մի գլուխ» բարձր էր Իտալիայից: Նախ առաջին կէսում 28-րդ րոպէին Կարդոսուն առաջ մղեց պորտուգալացիներին: Իսկ երկրորդ կէսի մեկնարկին գերաբաղ կոլի հեղինակ դարձաւ Ռամոսը, ով աչքի ընկաւ 46-րդ րոպէին: Մի քանի րոպէ անց Պորտուգալիան խփեց նաեւ երրորդ գնդակը: Այս անգամ էլ կոլը խփեց Ֆելիքս Կորեիան: Իտալիա-Պորտուգալիա՝ 0:3:

Հանդիպմանը մարզադաշտում հետեւում էր 3700 հանդիսական: Ա խմբի երկրորդ տուրում Հայաստանի հաւաքականը Յուլիսի 17-ին կը խաղայ Իտալիայի հետ (Հանրապետական մարզադաշտ, ժամը 21:00-ին), իսկ Պորտուգալիան ուժերը կը չափի Սպանիայի հետ (Բանանց մարզադաշտում):

## Ափրիկէյի Գաւաթ. Եզրափակիչում՝ Սենեգալ - Ալժիր

Ալժիրի հաւաքականը դուրս եկաւ ֆուտպոլի Ափրիկէյի ազգերի գաւաթի խաղարկութեան եզրափակիչ: Եզրապտուում անցկացուող մրցաշարի կիսաեզրափակիչում ալժիրցիները 2:1 հաշուով յաղթեց Նիգերիայի թիմին: Յաղթական կոլը աւելացուած 5-րդ րոպէին խփեց «Մանչեսթեր Սիթիի» կիսապաշտպան Ռիչարդ Մահրեզը:

Եզրափակիչում Ալժիրի մրցակիցը կը լինի Սենեգալի հաւաքականը, որը պաշարից դուրս էր թողել Թունիսի թիմին: Եզրափակիչը տեղի կ'ունենայ Յուլիսի 19-ին:

## Նեյմարը Շուտով Միանալու է Փարիզեան Թիմին

«Պարի Սեն Ժերմենի» հարձակուող Նեյմարը շուտով միանալու է փարիզեան թիմին եւ սկսելու է նախապատրաստուել 2019/20 մրցաշրջանին: Այս մասին տեղեկացրել է անձամբ ֆուտբոլիստը: «Վերադառնում եմ Ֆրանսիա, որպէսզի միանամ տղաներին եւ մարզուեմ թիմի հետ: Ես 100% կ'ենտոնացել եմ նոր մրցաշրջանի վրայ», - Նեյմարի խօսքը փոխանցում է Globo Esporte-ն:

Տարածուած լուրերի համաձայն՝ Նեյմարը Փարիզ է վերադառնում, որպէսզի ակումբի սպորտային տնօրէն Լեոնարդոյի հետ քննարկի «Բարսելոնա» տեղափոխութեան հարցը: